



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

12 փետրվարի 2019 թվական

Ձ-ԲԴ ՆՏՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

### ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 12.30

#### Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են  
ավագանու 21 անդամ՝

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Հայկ Միրզոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լյուդմիլա Մարգարյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հռիփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Դավիթ Խաժակյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Միփան Ասատրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Նուարդ Վարդանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Արթուր Իսպիրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Գայանե Մելքոն Մելքոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Արսեն Կարապետյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Իզաբելլա Աբգարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Մեսրոպ Պապիկյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Մերգեյ Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Սուրեն Էյրամջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Հայկ Հովհաննիսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրե՛մ:

**Արման Անտոնյան**

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի անդամներ, հարգելի աշխատակազմ, ԶԼՄ-ի հարգելի ներկայացուցիչներ, հարցս վերաբերում է հանրությանը մտահոգող տրանսպորտի ոլորտին: Ինֆորմացիայի կարգով ուզում եմ տեղեկացնել, որ ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության վստահամար ներկայացվել և ընդգրկվել եմ տրանսպորտային բարեփոխումների հանձնաժողովի կազմում, ինչի համար շնորհակալ եմ: Նախքան բարեփոխումների ամբողջական փաթեթի մեկնարկը, գիտենք, որ ներկայումս բազմաթիվ խնդիրներ կան տրանսպորտային համակարգում: Այդ արդյունքում ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ներսում ձևավորվել է նաև տրանսպորտի հարցերով աշխատանքային խումբ, որը կապող օղակ կարող է հանդիսանալ և արդեն իսկ հանդիսանում է հանրության և քաղաքապետարանի միջև:

Ընդամենը մի քանի օրվա թափանցիկ աշխատելառճի շնորհիվ արձանագրեցինք բազմաթիվ իրական և խելամիտ առաջարկներ, ինչի շուրջ ցանկանում եմ և՛ կոչի, և՛ պատրաստակամության հայտ ներկայացնել սերտ համագործակցելու, մասնավորապես, տրանսպորտի վարչության հետ: Ցանկանում եմ նաև տեղեկացնել, որ քաղաքը բեռնաթափելու նպատակով սկսվել է այլընտրանքային տրանսպորտային միջոցների ներմուծման գործընթաց, որի մեկնարկը տրված է, վստահ եմ, որ այս տարի կունենանք: Այս հարցի շուրջ սկսվել է երկխոսություն քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանի հետ: Խնդրում եմ հակիրճ ներկայացնել, թե բարեփոխումների գործընթացը ո՞ր փուլում է գտնվում, քանի որ հանրության կողմից բազմաթիվ հարցեր ենք ստանում գործընթացի մասին:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Մարգարյանը:

### **Հրաչյա Մարգարյան**

-Շնորհակալություն հարցի համար: Ինչ վերաբերում է բարեփոխումներին, նշել էինք, որ «Դարբյու Վայ Ջի» կազմակերպության կողմից վերջնական հաշվետվությունը փետրվարի վերջին կունենանք, նրանք արդեն ուղարկել են առաջարկված մեկնաբանությունների նախնական վերջնական տարբերակը, որից հետո հանձնաժողովում, որտեղ դուք էլ եք ընդգրկված, քննարկում կլինի, այսինքն՝ գործընթացը կվերսկսենք:

Ինչ վերաբերում է գործող տրանսպորտային համակարգի առկա խնդիրներին, դրանց մասին տեղյակ ենք, վստահեցնում ենք, որ մոտակա ժամանակները տրանսպորտային միջոցների հաճախականության, վարորդների արտաքին տեսքի և ծխելու հետ կապված հարցերը խստագույնս վերահսկողության են ենթարկվելու: Մոտակա ժամանակներս հանձնաժողովի նիստ տեղի կունենա, որտեղ մնացած ավելի առարկայական հարցերը կքննարկվեն: Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն: Հաջորդ հարցը ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյան, խնդրե՛մ:

### **Միքայել Մանրիկյան**

-Շնորհակալություն: Հարգելի գործընկերներ ավագանու վերջին նիստի ժամանակ լուծարեցինք «Արաբկիր-սերվիս» ՓԲԸ-ն և այժմ կանգնած ենք փաստի առջև: Աշխատակիցներն իրենց դիմում-բողոքներով դիմել են, որ կանգնած են սոցիալական ծանր խնդրի առաջ և փաստացի դառնում են գործազուրկ: Ցանկանում եմ տեղեկանալ, ի՞նչ միջոցներ կարող ենք ձեռնարկել տվյալ անձանց աշխատանքով ապահովելու համար:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն: Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը:

### **Հայկ Մարգարյան**

Շնորհակալություն: «Արաբկիր-սերվիս» ՓԲԸ-ի լուծարումն ավագանու որոշմամբ հաստատված գործառույթի արդյունքն էր և մեր առաջարկությամբ, ինչի արդյունքում, բնականաբար, ակնկալվում էր, որ որոշակի կրճատումներ տեղի կունենան: Մենք, ձեզ հետ միասին, որդեգրել ենք օպտիմալացման գործընթացը, ուստի՝ այս երևույթներն անխուսափելի էին: Հասկանալի է, որ սա առաջացնում է խնդիրներ՝ ընտանեկան բյուջեի և

աշխատող անձի կորուստներ և այլն: Պետական համակարգն օպտիմալացնելու համար ուղղակի այլ ճանապարհ չունենք:

Ինչ վերաբերում է «Արաբկիր-սերվիս» ՓԲԸ-ի աշխատակիցներին, ապա օրենքով սահմանված կարգով նախնական պատշաճ ծանուցման գործընթացն ապահովվել է և աշխատակիցներին հնարավորություն է տրվել երկու ամիս շարունակել աշխատանքը: Նախատեսվում է աշխատանքից դուրս գալուց առաջ կատարել վերջնահաշվարկ: Այնպես որ օրենքով սահմանված վճարումների ամբողջ գործընթացն աշխատակիցների համար ապահովվելու ենք: Ինչ վերաբերում է հետագա աշխատանքային զբաղվածության խնդիրներին, ճիշտն ասած, այս պահին պատրաստ չեմ պատասխանել, քանի որ դա մեր գործառույթներից դուրս է:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն: Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրե՛մ:

### **Անի Խաչատրյան**

-Պարո՛ն քաղաքապետ, հարցս ուղղում եմ Ձեզ՝ որպես ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ներկայացուցիչ: Ես, լինելով Երևանի ավագանու նախկինում ԵԼՔ խմբակցության, ներկայումս՝ ԼՈՒՅՍ խմբակցության կազմում, հավատարիմ եմ մնացել նաև ԵԼՔ խմբակցության նախընտրական ծրագրին, որով ընտրվել ենք: Մեր ծրագրում ներառվել էր մի կետ, որի նախաձեռնող խմբից էր ներկայիս ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամներից մեկը:

Քաղաքական իրավիճակ է փոխվել, միգուցե մարդկանց մոտեցումները փոխվել են, բայց ես, հավատարիմ մնալով մեր նախկին ծրագրին, պատրաստվում եմ նախագիծ ներկայացնել: Առաջարկում եմ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցությունից Լևոն Զաքարյանին հանդես գալ համատեղ նախագծով՝ Լենինգրադյան փողոցի անվանափոխության վերաբերյալ, որովհետև պարոն Զաքարյանը **8000** ստորագրություն հավաքագրող նախաձեռնող խմբից էր:

Ցանկանում եմ նաև ճշտել. ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցությունից Արմեն Գալջյանը նախատեսու՞մ է մոտ ապագայում ներկայացնել այն նախաձեռնությունը, որը մի քանի օր առաջ տրամադրվեց մեզ, այնուհետև՝ հետ կանչվեց: Խոսքը Միկոյան փողոցը Հրանտ Դինքի անվամբ անվանափոխելու վերաբերյալ նախագծի մասին է:

ԵԼՔ խմբակցության ժամանակ մենք առաջարկել էինք Միկոյան փողոցն անվանափոխել Քըրք Քըրքորյանի անվամբ, բայց Հրանտ Դինքի անունով անվանափոխելու առաջարկն ինձ ավելի է դուր գալիս: Այս դեպքում Միկոյանը՝ ազգի դավաճան, փոխարինվում է, կարծես թե դահիճը փոխարինվում է գոհով:

Ցանկանում եմ իմանալ նախատեսվում են արդյոք այս երկու նախագծերը ետ բերել, եթե՝ ոչ, ապա երկու նախաձեռնություններն էլ ինքս եմ պատրաստվում ներկայացնել:

Հաջորդ հարցս վերաբերում է «Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ-ին, որը փակ բաժնետիրական ընկերություն է և սպասարկում է իրականացնում վարչական շրջանում: Այնտեղից ահազանգ ունեմ, որ մինչ օրս մարդիկ աշխատավարձ չեն ստացել, սա մեկ:

Նոր Նորք վարչական շրջանում կա **10** այգի, **8000** քմ ծաղկային գոտի և սպասարկող **5** վարչության ղեկավար, ովքեր կրճատվում, դառնում են **3**-ը: Կրճատվում են այսպիսի սկզբունքով. երիտասարդ և բավականին փորձառու մարդիկ կրճատվում են, ես ուսումնասիրել եմ այդ մարդկանց կենսագրությունները, փոխարենը շարունակում են աշխատել թոշակառու մարդիկ:

Ցանկանում եմ հասկանալ ի՞նչ սկզբունքով և ինչպե՞ս է այդ ընտրությունը կատարում վարչական շրջանի ղեկավարը: Այս ամենից բացի՝ մարդիկ չեն ստացել պարգևատրում, երևի թե, փակ բաժնետիրական ընկերություն լինելու պատճառով, փոխարենը հավելյալ աշխատել են՝ կատարելով ոչ իրենց ծառայությունները: Վարչական շրջանն աշխատեցրել է տոնածառի լույսեր են տեղադրել, ամանոբյա զարդարանքով են զբաղվել, որն այդ ընկերության գործառույթներում չի եղել, և դրա համար էլ չի վարձատրվել այդ կառույցը:

Խնդրում եմ վարչական շրջանի ղեկավարը պարզաբանի, թե ի՞նչ սկզբունքով է ընտրել մարդկանց, ու՞մ է հեռացնում, ու՞մ պահում և ինչու՞ է մարդկանց աշխատեցրել ու չի վճարել:

### **Հայկ Մարության**

-Առաջին հարցի վերաբերյալ մենք քննարկումներ ենք ունեցել Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի հետ. անվանակոչությունների վերաբերյալ կան բազմաթիվ դիմումներ, որոնք դեռ չենք հասցնում մշակել: Պետք է հասկանանք, թե ընդհանրապես ինչ համակարգով ենք մշակելու այդ դիմումները: Ինչ վերաբերում է Ձեր կողմից նախատեսվող նախաձեռնություններին, նախագիծը կարող էք ներկայացնել, ավագանին հարցը կքննարկի և կընդունի որոշում:

Երկրորդ հարցին կպատասխանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Գոռ Հարությունյանը, խնդրե՛մ:

### **Գոռ Հարությունյան**

-Ինչ վերաբերում է օպտիմալացման հարցին՝ «Նոր Նորք կանաչապատում» ՓԲ ընկերության տնօրենն ինքն է որոշում օպտիմալացման և կրճատման հարցը: Աշխատավարձերի հետ կապված, ասեմ, որ «Նոր Նորք կանաչապատում» ՓԲ ընկերությունը տեղերը շահել է, հաջորդել է պայմանագրերի կնքման փուլը, հարկային

պարտավորություններ է ունեցել: Այս պահին ընկերության գործառույթները փաստացի դադարեցված են:

**Անի Խաչատրյան**

-Հարցն այլ էր, ինչու՞ էք աշխատեցրել և չեք վճարել:

**Գոռ Հարությունյան**

-Վարչական շրջանը նման բան չի արել:

**Անի Խաչատրյան**

-Այդ կազմակերպությունն է վարչական շրջանի տոնաձառի լույսերը տեղադրել:

**Գոռ Հարությունյան**

-Վարչական շրջանը շենքի լուսավորությունը ձևավորել է իր աշխատակիցների միջոցով, այդ ընկերությունն ինքն է կազմակերպել:

**Անի Խաչատրյան**

-Ես շենքի մասին չեմ խոսում, վարչական շրջանի ծառերի և այլնի մասին է խոսքը:

**Հայկ Մարության**

-Տիկի՛ն Խաչատրյան, Ձեր հարցը, կարծես թե, «Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ-ի տնօրենին է ուղղված, նա է որոշում, թե ընկերությունն ինչով է զբաղվում:

**Անի Խաչատրյան**

-ՓԲ ընկերության տնօրենը չի ղեկավարում տոնաձառի լույսերի տեղադրումը, դա նրա գործառույթների շրջանակում չի:

**Հայկ Մարության**

-Տնօրենն է որոշում կայացնում, այնպես որ կարող էր դիմել նրան՝ հասկանալու համար ինչու՞ է այդպիսի որոշում եղել և աշխատակիցներն ինչու՞ են որոշել այդպիսի բան անել:

**Անի Խաչատրյան**

-Վարչական շրջանն է աշխատեցրել: Ստացվում է, եթե այդ ընկերության աշխատակիցը ցանկություն ունենա դառնալ իրավաբանական վարչության պետ, պետք է թու՞յլ տալ:

**Հայկ Մարության**

Ո՛չ, այս ընկերությունը հանդիսանում է առանձին փակ բաժնետիրական ընկերություն, ճիշտ է 100% բաժնետերը քաղաքապետարանն է, բայց, այնուամենայնիվ, այն առանձին կառույց է և որոշումներ կայացնում է ինքնուրույն:

### **Անի Խաչատրյան**

-Պարո՛ն քաղաքապետ, ցանկանում եմ Ձեզ տեղեկացնել, որ այս հարցը բարձրացնելուց հետո, տվյալ ընկերությունում կամ վարչական շրջանում, հստակ չգիտեմ, աշխատողների հետ պարզաբանման գործընթաց է սկսվել: Ստացվում է մենք ավագանու նիստի ժամանակ խնդիր ենք բարձրացնում, որին պետք է լուծում տալ, իսկ այնտեղ աշխատողներից պարզաբանում են պահանջում, թե ով է տեղեկատվություն տվել, որ դուք տոնածառի լույսեր եք տեղադրել, սա ի նկատի ունեցեք:

### **Հայկ Մարություն**

-Շատ լավ: Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրե՛մ:

### **Հայկ Միրզոյան**

-Շնորհակալությու՛ն, հարցս վերաբերում է շտապբուժօգնության ծառայության խնդիրներին: Տեղյակ եմ, որ այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում: Նշվեց, որ այդ խնդիրները կարելի է թեթևացնել պոլիկլինիկաների կամ առողջության առաջնային պահպանության արդյունավետ աշխատանքների միջոցով, որտեղ նույնպես կան բազմաթիվ խնդիրներ: Ցանկանում եմ տեղեկանալ այս ուղղությամբ տարվող աշխատանքներն ի՞նչ փուլում են գտնվում:

### **Հայկ Մարություն**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը, խնդրե՛մ:

### **Սերգեյ Հարությունյան**

-Խնդիրները բազմաթիվ են և նոր չեն, դրանք կապված են շենքային պայմանների, աշխատավարձերի, աշխատանքային դժվար վիճակի, ինչպես նաև անհարկի կանչերի հետ, որոնք էլ ավելի են ծանրաբեռնում աշխատակիցների աշխատանքը: Պոլիկլինիկաների հետ սերտ աշխատանքների արդյունքում, կարող ենք արձանագրել, որ **15-20%** նվազել է անհարկի կանչերի քանակը: Օրեր առաջ տարածվեց նաև մի վավերագրկան տեսանյութ, որտեղ մարդիկ պատմում են, թե ինչ դեպքեր են պատահում, որոնք կապված չեն շտապբուժօգնության ծառայությունների հետ: Եվս մեկ անգամ հորդորում ենք, անհարկի չկանչել շտապբուժօգնություն, քանի որ այդ վայրկյաններն ավելի կարևոր են այլ մարդկանց կյանքի համար:

Ինչը վերաբերում է շտապբուժօգնության աշխատակիցների աշխատանքին և շենքային պայմաններին, կարող եմ ասել, որ կա նախնական պայմանավորվածություն, մեր լիազորության և ֆինանսական հնարավորությունների սահմանում՝ ենթակայաններում կատարել որոշակի վերանորոգում, որը վերջին տասը տարվա ընթացքում չի իրականացվել:

Ամենօրյա ռեժիմով աշխատում ենք առողջապահության նախարարության հետ, նախարարի հետ ուղիղ կապի մեջ ենք, որպեսզի մոտ ժամանակներս փորձենք շտապբուժօգնության 540 աշխատակցի ընդգրկել պետպատվերով առողջապահության ապահովագրության ծրագրերի շրջանակներում:

Շտապբուժօգնության խնդիրներն ուշադրության կենտրոնում են, և ոչ միայն, բոլոր այն հաստատությունները, որոնք քաղաքապետարանի ենթակայության տակ են, առաջին իսկ օրվանից ուշադրության կենտրոնում են: Խնդիրները նոր չեն և բազմաթիվ են: Առաջ եկած նոր խնդիրներին արագ լուծումներ ենք տալիս, իսկ մեր առջև ծառայած խնդիրներին, որոնք պահանջում են երկարատև աշխատանք, երաշխավորում եմ, որ հնարավորության սահմաններում լուծումներ կտրվեն:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Լյուդմիլա Սարգսյան, խնդրե՛մ:

### **Լյուդմիլա Սարգսյան**

-Պարո՛ն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ Երևան քաղաքի 2019թ. ծրագրի ուսումնասիրության արդյունքում հետաքրքիր դրվագներ նկատեցինք, որոնց ընթացքում կանդրադառնանք: Այս պահին ցանկանում եմ անդրադառնալ մի խնդրի, որը, կարծում եմ, բոլորիս է հուզում: Խոսքը վերաբերում է մանկապարտեզների նորոգումներին, այստեղ տարօրինակ մի բան եմ նկատել: Ձեր ներկայացրած թվերն ուսումնասիրելիս տպավորություն է ստեղծվում, որ վերանորոգման ցանկի մեջ հիմնականում ներառված են Կենտրոն վարչական շրջանի և մերձակա վարչական շրջանների մանկապարտեզները: Թվերով կարող եմ ասել. Արաբկիր՝ 13-ից 4 մանկապարտեզ, Դավթաշեն՝ 5-ից 3, Էրեբունի՝ 12-ից 3 և այդպես շարունակ, այնուհետև Ավան՝ 7-ից ոչ մեկ, Աջափնյակ՝ 16-ից 0, Նուբարաշեն՝ 2-ից 0, Շենգավիթ՝ 22-ից 0:

Շենգավիթ վարչական շրջանում այցելել ենք 144-րդ մանկապարտեզը: Քաղաքացիները խնդրել էին մեզ, որպեսզի Ձեզ ներկայացնենք այս մանկապարտեզի ընդհանուր վիճակը: Նամակով դիմել ենք Ձեզ, որ այն ներառվի վերանորոգման ծրագրի մեջ: Ըստ էության ստացվում է, որ կենտրոնին մոտ գտնվող վարչական շրջանների մանկապարտեզները ներառված են այս ծրագրի մեջ, իսկ ծայրամասերի մանկապարտեզները՝ ոչ:

Հասկանում եմ, որ կենտրոնը շատ կարևոր է, տուրիստական գոտի է, հյուրերը հիմնականում կենտրոնում են լինում, բայց չմոռանանք, որ հաճախ նաև ծայրամասից են գալիս դեպի կենտրոն: Մեր բոլորի ծրագրերում, այդ թվում նաև ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության,



ներառված էր, որ նախևառաջ ուշադրությունը պետք է կենտրոնացնել ծայրամասերի վրա, որովհետև այնտեղ վիճակը շատ ավելի վատ է և ուշադրությունից դուրս մնացած:

Ցանկանում եմ հասկանալ ինչպե՞ս է կազմվել այս ցանկը, ովքե՞ր են Ձեզ ներկայացրել, թե որ մանկապարտեզները պետք է վերանորոգվեն, որոնք՝ ոչ, որքանո՞վ է դա օբյեկտիվ և արդարացված, ի՞նչ նպատակներ ունեք մյուս մանկապարտեզների նորոգման համար:

### **Հայկ Մարության**

-Տիկի՛ն Մարգարյան, շատ ճիշտ հարց եք բարձրացնում: Ասեմ, որ իմ վարած քաղաքականությունն ուղղված է վարչական շրջանների հավասարաչափ զարգացմանը: Երևանի **2019**թ. բյուջեում նախատեսվում են փոփոխություններ, ներկայումս հարցը գտնվում է քննարկման փուլում: Նշեմ, որ ՄԱԿ-ը նույնպես մանկապարտեզների վերանորոգման ծրագիր է իրականացնում, հնարավոր է մեր ծրագրից դուրս մնացած մանկապարտեզները ներառված լինեն իրենց ծրագրում:

Շենգավիթ վարչական շրջանում կա մանկապարտեզ, որտեղ աուտիզմով հիվանդ երեխաների հետ զբաղվող հասարակական կազմակերպություն է գործում: ՄԱԿ-ի ծրագրի շրջանակներում այս մանկապարտեզը պետք է վերանորոգվի, սակայն այստեղ կա խնդիր. ՄԱԿ-ի պարտադիր պահանջներից մեկն այն է, որ մանկապարտեզում չպետք է լինի այլ վարձակալ: Այս պայմանով է միայն մանկապարտեզն ընդգրկվում վերանորոգման ծրագրի մեջ: Այս հարցը մեր ուշադրության կենտրոնում է, կայացել է հանդիպում բոլոր շահագրգիռ կողմերի հետ, հարցն անպայման լուծում կստանա:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրե՛մ:

### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալությու՛ն հարցի համար, պետք է նշեմ, որ, ցավոք սրտի, անբարեկարգ մանկապարտեզներ կան և՛ կենտրոնում, և՛ ծայրամասերում: Կենտրոնում էլ ունենք և՛ լավ, և՛ վատ վիճակում գտնվող մանկապարտեզներ, ծայրամասերում նույնպես: Այս հարցին տրվել է լուծում՝ ըստ առաջնահերթությունների: **2019**թ. ընթացքում, բնականաբար, հնարավոր չէ բոլոր խնդիրներին լուծում տալ, սակայն պետք է փաստեմ, որ ծրագիրը կազմելիս հաշվի չի առնվել, թե մանկապարտեզն ինչ վարչական շրջանում է գտնվում, հաշվի է առնվել այն հանգամանքը, թե խնդիրը կարևորության ինչ աստիճան ունի:

### **Լյուդմիլա Մարգարյան**

-Գիտեք համամիտ չեմ այն կարծիքին, որ կենտրոնում էլ կան ոչ բարեկարգ մանկապարտեզներ, միգուցե և կան, բայց սովորաբար կենտրոնի մանկապարտեզները

Ժամանակի ընթացքում, նախկին իշխանությունների օրոք էլ, ինչ-ինչ ճանապարհներով նորոգվում էին: Ծայրամասերի մանկապարտեզները միշտ ուշադրության կենտրոնից դուրս են եղել: Այստեղ բաշխումն անհասկանալի է՝ Նոր Նորքում 22-ից 10-ը նորոգվում է, իսկ Շենգավիթում 22 մանկապարտեզից ոչ մեկը չի նորոգվում:

Պարո՛ն Մարության, ես կարծում եմ, որ Դուք պետք է մի քանի թիրախային մանկապարտեզ ընտրեք, գնաք տեղում ստուգեք և կտեսնեք, որ երբեմն ամեն ինչ չէ, որ Ձեզ ճիշտ է ներկայացվում: Դուք, որ ասում եք պետք է փոփոխություններ լինեն ծրագրի մեջ, կարծում եմ այդ դեպքում իմաստ չունեն ծրագիրը ներկայացնել: Մանրամասն ուսումնասիրեիք, թե իրականում ինչ վիճակ է տիրում, նոր ծրագիրը կազմեիք, կամ այժմ փորձեք ինչ-որ ձևով ընտրել մանկապարտեզներ և ստուգել ընդհանուր վիճակը: Ով էլ այս թվերը տեսնի, կհասկանա, որ, ըստ էության, արդար բաշխում տեղի չի ունեցել:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ին, ես տեղյակ եմ խնդրին և կարծում եմ, որ եթե նման ծրագիր կա, ապա շատ հեշտ կարելի է համագործակցել և նշել, որ ՄԱԿ-ն զբաղվում է տվյալ վարչական շրջանների մանկապարտեզներով, Երևանի քաղաքապետարանն էլ փորձում է մյուս վարչական շրջաններում իրականացնել նորոգումներ: Հստակություն թող մտնի, որ իմանանք հետո ումից ինչ պահանջենք: Ծնորհակալությու՛ն:

#### **Հայկ Մարության**

- Հարցին կանդրադառնա քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը, խնդրե՛մ:

#### **Հայկ Սարգսյան**

- Ցանկանում եմ նշել, որ ծրագրում պլանավորված են կոնկրետ մանկապարտեզների քանակ, իսկ բյուջեում արտատպվում են այն մանկապարտեզները՝ ծախսային մասերով, որոնց վերաբերյալ արդեն կա իրականացված նախագծանախահաշվային պլան:

Այդ երկու ցուցակը, որ Դուք համադրեք, կտեսնեք, որ բոլոր վարչական շրջաններում կան նորոգման ծրագրում ներգրավված մանկապարտեզներ: Քանի որ ՄԱԿ-ի ընտրության չափանիշները մի փոքր այլ են, այնտեղ կարող են հայտնված չլինել Շենգավիթ վարչական շրջանի մանկապարտեզները, որովհետև այնտեղ կա տարածքների ազատության խնդիր և այլն: Երկու ցուցակը նայելու դեպքում կհամոզվեք, որ բոլոր վարչական շրջանների մանկապարտեզներն ընդգրկված են վերանորոգման ծրագրերում:

#### **Հայկ Մարության**

- Ծնորհակալությու՛ն: Քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյան, խնդրե՛մ:

#### **Հրաչյա Սարգսյան**

- Ծնորհակալությու՛ն: Ցանկանում եմ նշել, որ բացի նշված 30 մանկապարտեզից և այն մանկապարտեզներից, որոնք նախատեսված են վերանորոգել պետական բյուջեով, այժմ

աշխատանքներ են տարվում թվով **18** մանկապարտեզում ՄԱԿ-ի ծրագրով վերանորոգման աշխատանքներ իրականացնել: Վերջնական ցանկը հստակեցման փուլում է, քանի որ, ինչպես նշեցին իմ գործընկերները, մանկապարտեզների ընտրության հարցում ՄԱԿ-ի կողմից կան հստակ չափորոշիչներ: Վերջնական արդյունքում կունենանք **48** մանկապարտեզ:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն: Վարչական շրջանի ղեկավար Վիկտոր Մնացականյան, խնդրե՛մ:

#### **Վիկտոր Մնացականյան**

-Քանի որ անդրադարձ եղավ Կենտրոն վարչական շրջանին, ցանկանում եմ նշել, որ Նոր Նորք և Կենտրոն վարչական շրջանների կառուցապատման տարիների տարբերությունը մոտավորապես **50-60** տարի է, սա վերաբերում է նաև բնակֆոնդին:

Կենտրոն վարչական շրջանի մանկապարտեզները տարիների ընթացքում ամենաշատն են տուժել և ամենաշատ սեփականաշնորհված մանկապարտեզներ ունենք: **38** մանկապարտեզից հիմա ունենք ընդամենը **21**-ը, կարծում եմ սա շատ հիմնավոր փաստարկ է: Դուք գիտեք, որ Կենտրոն վարչական շրջանում են հիմնականում կենտրոնացված բոլոր պետական հիմնարկները և մնացած հաստատությունները, ուստի՝ ծնողների համար ավելի հարմար է, որ իրենց երեխան հաճախի Կենտրոն վարչական շրջանի մանկապարտեզ: Այս տարի ունենք բավականին մանկապարտեզներ, որոնց սենյակները, դասասենյակները վատ վիճակում են հին լինելու պատճառով: Օրինակ՝ կա մանկապարտեզ, որ ունի **4** սենյակ, բայց աշխատում է ընդամենը **2**-ը: Ամեն անգամ վերանորոգելու պատճառն այն է, որ ամենաշատ հոսքը հենց Կենտրոն վարչական շրջանի մանկապարտեզներում է:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն: Շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյան, խնդրե՛մ:

#### **Գրիգոր Հարությունյան**

-Կենտրոն վարչական շրջանում **2018**թ. վերանորոգվել են թվով **5** մանկապարտեզ՝ հհ. **6, 9, 13, 16** և **18**: **5** մանկապարտեզի համար արժեքը կազմել է ընդամենը **45** մլն. դրամ, իսկ Ավան վարչական շրջանում հ.57 մանկապարտեզի վերանորոգման արժեքը կազմել է **26** մլն. դրամ: Նոր Նորքում հ.117 մանկապարտեզը ջեռուցվել է, միայն դրա արժեքը կազմել է **21** մլն. **600** հազ. դրամ, իսկ Սարի թաղում մեկ մանկապարտեզի վերանորոգման աշխատանքի գումարը կազմել է **35** մլն. **700** հազ. դրամ: Կենտրոն վարչականի շրջանի **5** մանկապարտեզի

կոսմետիկ վերանորոգման համար ծախսվել է 45 մլն. դրամ, իսկ Նոր Նորքում, Սարի թաղում միայն մեկի համար 35 մլն. դրամ:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրե՛մ:

### **Թեհմինա Վարդանյան**

-Շնորհակալությու՛ն: Պարո՛ն քաղաքապետ, երկու հարց ունեմ, որոնք բացառապես ուղղված են Ձեզ և ակնկալում եմ Ձեր պատասխանը: Ներկայացնեմ առաջին հարցս: Վերջերս քաղաքապետարանը ձեռք է բերել թվով 9-ը ձևաքրման բազմաֆունկցիոնալ մեքենա, ինչին հաջորդեց անձամբ Ձեր հայտարարությունը, որ Երևան համայնքը կդառնա սանմաքրում իրականացնող օպերատորներից մեկը: Ինձ համար սա մի փոքր անհասկանալի էր, որովհետև մի շարք հարցերի տեղիք է տալիս. ովքեր են իրականացնելու աշխատանքները՝ վարորդ, մաքրուհի, բանվոր, որտեղից է այդ ամենը ֆինանսավորվելու: Տեխնիկական խնդիրներ առաջանալու դեպքում ովքե՞ր են ֆինանսավորելու, եթե անվաղողը վնասվի կամ դիզվառելիքի խնդիր առաջանա և այլն:

Կարծում եմ տեղյակ եք, որ, մինչև երկու օպերատոր ներգրավելը, Երևանը բաժանվել է երկու մասի՝ արևմտյան և արևելյան: Ըստ էության այստեղ մի փոքր սխալ է հնչում, երբ ասում ենք երկրորդ օպերատոր, քանի որ այժմ Երևանում գործում է երկու օպերատոր՝ «Սանիթեք Արմենիա» և «Սանիթեք ինթերնեյշնլ», որոնք իրականացնում են երկու մասի աշխատանքները:

Երևանը դառնում է օպերատոր, ինչպե՞ս են բաժանվելու աշխատանքները, ինչպե՞ս է դա իրականացվելու, գուցե քաղաքը 3 մասի եք բաժանելու կամ պայմանագրերից մեկը, այնուամենայնիվ, խզվելու է: Այստեղ մի փոքր անհասկանալի է. այդ 9 մեքենաները և հաջորդիվ, եթե բերեք սանմաքրման այլ մեքենաներ, Երևանի ո՞ր հատվածներում են աշխատանքներ կատարելու և առհասարակ «Սանիթեքի» պայմանագրերից նորություններ ունենք, թե՞ ոչ:

Պարո՛ն քաղաքապետ, խոսակցություններ են շրջանառվում, ուստի՝ խնդրում եմ փարատեք իմ կասկածներն այն մասին, արդյոք Երևան համայնքն իր բյուջեից ձեռք է բերելու սանմաքրման մեքենաներ և վարձակալության է տալու «Սանիթեք» ընկերությանը:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալությու՛ն, ճիշտ և հետաքրքիր հարց եք բարձրացնում: Այս թեմայով բազմաթիվ խոսակցություններ եղել են ներքին շրջանակներում, դրա մասին խոսել ենք: Այս պահին վերջնական լուծում չկա, քննարկումներ են ընթանում: Ֆինանսական միջոցները

պետք է կատարվեն այն գումարներից, որոնք այսօր նախատեսված են Երևանի սանմաքրման համար:

#### **Թեմինա Վարդանյան**

-Շնորհակալություն: Այսինքն՝ Երևանի բյուջեից են էլի դուրս գալու, թե այլ համայնքապատկան հիմնարկ է բացվելու, որն իրականացնելու է այդ գործառույթը:

#### **Հայկ Մարության**

-Այսօր տարեկան մոտ 5 միլիարդ 200 միլիոն դրամ է տրամադրվում աղբահանության, սանմաքրման, ձնմաքրման աշխատանքների համար: Բնականաբար՝ այդ գումարից է տրամադրվելու:

#### **Թեմինա Վարդանյան**

-Շնորհակալություն: Երկրորդ հարցս վերաբերում է բազմաչարչար 19-ը պոլիկլինիկային: Ավագանու 2014թ. փետրվարի 11-ի որոշմամբ պոլիկլինիկան հանձնվել է հավատարմագրային կառավարման՝ հինգ տարի ժամկետով և երկարաժամկետ ներդրումային ծրագիր է ներկայացրել տասը տարի ժամկետով: Նախորդ տարի բազմաթիվ բժիշկների խնդրանքով և պահանջով Երևանի ավագանու «Ելք» խմբակցությունն այցելեց պոլիկլինիկա, արձանագրեց մի շարք կոպիտ խախտումներ՝ կաշառակեր տնօրեն, ում դեմ սեպտեմբեր ամսին երկու հոդվածով քրեական գործ հարուցվեց:

Նշեմ, որ 5 տարին փետրվարի 11-ին լրացել է, սակայն սրա հետ կապված որևէ բան չկա: Ամենազավեշտալին այն է, որ Դուք քաղաքապետի երկու կարգադրություն էք տվել, մեկը՝ 11.01.2018թ. ստեղծել հանձնաժողով և աուդիտի ենթարկել պոլիկլինիկան: Հանձնաժողովի կազմը մանրամասն ուսումնասիրել եմ և 22.01.2019թ. եղել է քաղաքապետի ևս մեկ կարգադրություն, որ նախորդ կարգադրությունն ուժը կորցրած ճանաչվի, նորից աուդիտ անցկացվի: Կրկին ուսումնասիրել եմ հանձնաժողովի կազմը, որտեղ մեկ հոգի է փոխվել:

Այս ամիսների ընթացքում լրություն է, ոչ մի լուր չունենք ինչ գործընթացներ են կատարվում: Չեմ հասկանում ինչու՞ պոլիկլինիկան հետ չենք վերցնում: Կարծում եմ իրավաբանորեն մի քանի կետով կարող ենք պայմանագիրը խզել, որպեսզի բյուջեի վրա հավելյալ ծախս չառաջանա: Խնդրում եմ ասել ի՞նչ կարգադրություններ էին, ինչու՞ է երեք ամիս անց մի կարգադրությունն ուժը կորցրած ճանաչվել, տրվել է ուրիշ կարգադրություն և հանձնաժողովը, առհասարակ, երեք ամիս ինչո՞վ է զբաղվում:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

## Մերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն՝ն հարցի համար: Իմ աշխատանքային առաջին իսկ օրն ինձ ներքևից զանգահարեցին և ասացին, որ թիվ **19**-ը պոլիկլինիկայի անձնակազմը եկել է Ձեզ հետ հանդիպման: Նրանց հետ ամենօրյա կապ կա, վերջին անգամ նրանց ընդունել եմ երկու օր առաջ, եթե չեմ սխալվում **7** կամ **8** հոգի էին:

Այժմ բացատրեմ ինչ է կատարվում. լսելով մեր հարգարժան բժիշկների բողոքները՝ ընդդեմ տնօրենի և նրա վարած քաղաքականության, ինչ հնարավոր էր ուսումնասիրեցինք, բացատրեմ ինչու եմ վերապահումով ասում, այնտեղ կա քրեական գործ: Երբ քաղաքապետի կարգադրություն եղավ, որպեսզի պոլիկլինիկայում և՛ ֆինանսական, և՛ իրավական աուդիտ անցկացվի, ինչպես նաև առողջապահության վարչության վերահսկողներն ուսումնասիրություն անեն, ցավոք սրտի լավ արձագանք չեղավ, որովհետև ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ քրեական գործի սահմաններում բոլոր փաստաթղթերն առգրավված են: Այդ պահի դրությամբ մեր լիազորությունից դուրս էր պոլիկլինիկայի ուսումնասիրությունը:

Քննչական կոմիտեի հետ մեր համագործակցության արդյունքում, մենք գրությամբ թույլտվություն խնդրեցինք կոմիտեից ուսումնասիրություն իրականացնելու համար: Այդ ամենից միայն երկու ամիս հետո, երբ իրենք հասկացան, որ ծավալը բավականին մեծ է, չեն հասցնում, ինչպես նաև հանրային հնչեղություն ունեցող գործ է և բոլորիս շահերից է բխում, որպեսզի օր առաջ այն հանգուցալուծում ստանա, մեզ հնարավորություն ընձեռվեց ուսումնասիրել փաստաթղթերը, այդ պատճառով է եղել քաղաքապետի երկրորդ որոշումը:

Տիկին Վարդանյան, ոչ թե **3** ամիս ոչ մի բան չի արվել, այլ առաջին օրը, երբ գնացել են ուսումնասիրության, հասկացել են, որ փաստաթղթեր չկան, որով կարող են աշխատել: Մենք քննչական մարմին չենք, մենք կարող ենք փաստաթղթեր ուսումնասիրել և տալ եզրակացություն, իսկ քննչական կոմիտեն գործում է իր լիազորությունների սահմանում: Դրանից հետո մեր հանձնաժողովը փաստացի ոչինչ չի արել այդ գործի շրջանակներում, քանի որ փաստաթղթերը հասանելի չեն եղել:

Քաղաքապետի երկրորդ կարգադրությունը տրվել է, երբ քննչական կոմիտեի կողմից եղավ համաձայնություն ուսումնասիրություն իրականացնելու համար: Այժմ այդ փաստաթղթերը հասանելի են, մի մասն արդեն տեղում ուսումնասիրվում են: Շաբաթը մեկ անգամ ընթացքի մասին զեկուցում եմ պարոն Մարությանին: Հանձնաժողովին, որտեղ ընդգրկված են ֆինանսական, իրավաբանական, վերահսկողության, առողջապահության վարչությունների և ներքին աուդիտի բաժնի աշխատակիցներ, **5** օր առաջ է հասանելի դարձել փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Տեղեկացնեմ նաև, որ քննչական կոմիտեի վերահսկողության վարչության պետի հետ էլ եմ կապի մեջ, նրանք էլ իրենց գործառնությունը են ուսումնասիրում, որպեսզի ի վերջո այդ գործն ավարտին հասցնեն՝ պարզելու համար այդտեղ կա՞ քրեական գործ, թե՛ ոչ: Ինչ վերաբերվում է տնօրենին՝ ՍՊԸ-ի կողմից նշանակված անձ է և խնդիրն անձի մեջ է, ոչ թե ՍՊԸ-ի, բնականաբար, ոչ պաշտպանում ենք, ոչ էլ դեմ ենք գործող պայմանագրին, մեր եզրակացությունը կլինի այս գործն ավարտվելուց հետո:

Ասեմ, որ Դուք ճիշտ եք, երկու օր առաջ լրացել է առաջին հնգամյակը, տեղեկացնեմ, որ ներդրումային ծրագիրն իրենց մոտ երկու հնգամյակից է բաղկացած եղել: Երկրորդը դեռ չենք ստորագրել, այս պահի դրությամբ մենք դադար ենք վերցրել, մինչև քննչական կոմիտեի արձագանքը: Ուսումնասիրության մի մասի բեռը վերցրել ենք մեզ վրա և պոլիկլինիկայի գործը մեր ուշադրության կենտրոնում է, բժիշկների հետ կապի մեջ եմ, բացի հեռախոսային զանգերը, 3-4 անգամ անձամբ հանդիպել եմ նրանց: Շնորհակալություն՝ն:

### **Թեմինա Վարդանյան**

-Շնորհակալություն՝ն պարոն Հարությունյան, ես տեղյակ եմ, որ Դուք բժիշկների հետ կապի մեջ եք, ես ինքս նրանց հետ կապի մեջ եմ և գիտեմ ինչ է կատարվում: Այստեղ, ըստ էության, գործ ունենք երկու հանգամանքի հետ. մի բան է, որ քաղաքապետարանն աուդիտ է անցկացնում՝ պարզելու արդյոք ներդրումներ արել է, ի՞նչ փաստաթղթեր կան, գումարային ի՞նչ ծախսեր կան, մեկ այլ բան է, որ այդ մարդու դեմ քրեական գործ է հարուցվել: Հայտարարում եմ՝ պայքարելու եմ, որպեսզի այդ մարդը որպես տնօրեն չաշխատի: Երկու գործ կա՝ մեկը կապված է ներդրումների հետ, հինգ տարվա կտրվածքով ներկայացված ծրագիրն արդյոք բավարարել է քաղաքապետարանին, մեկ այլ բան է, որ համայնքի պոլիկլինիկան տնօրինում է հավատարմագրային կառավարություն վերցրած անձ, ում դեմ կա քրեական երկու գործ՝ 308 հոդվածի 1-ին մասով և 309 հոդվածով, 1-ը՝ սարքավորումը չի աշխատում, սակայն տարիներ շարունակ գումարներ են գանձել, 2-րդ՝ աշխատակիցների աշխատավարձերից տարիներ շարունակ տասնյակ հազարների պահումներ են եղել:

Այսինքն՝ մենք հիմք չունենք ավագանու որոշումը հետ կանչել և դադարեցնել համագործակցությունը, իսկ մնացածը, համամիտ եմ, ընթացիկ գործ է: Ես գիտեի քաղաքապետի կարգադրություններն ինչու չեն կատարվում, բայց երեք ամիս առաջ կարող էիք հայտարարել, որ այս պահին կասեցվում է հանձնաժողովի աշխատանքը, որը կվերսկսվի առգրավված փաստաթղթերը քննչական կոմիտեի կողմից տրամադրելուց հետո:

Շնորհակալություն՝ն, հուսով եմ, ինչպս Դուք նշեցիք, սեղմ ժամկետներում այս հարցին լուծում կտրվի:

### **Մերգեյ Հարությունյան**

-Տիկի՛ն Վարդանյան, ամեն ինչ արվելու է, որպեսզի հարցին արդար լուծում տրվի: Տեղեկացնեմ, որ կասեցման հետ կապված քննչական կոմիտեի հետ գրուցել ենք, այդ ուղղությամբ էլ են աշխատանքներ տարվում, նրանց կողմից էլ կան վերապահումներ, որպեսզի քրեական գործը չտուժի և ամեն ինչ ճիշտ ընթանա: Պատրաստ եմ մինչև վերջ գնալ, որպեսզի ամեն ինչ լինի ճիշտ և արդարացի: Շնորհակալություն՛ն:

### **Թեհմինա Վարդանյան**

-Շնորհակալություն՛ն:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, ինդրե՛մ:

### **Սաթենիկ Մկրտչյան**

-Շնորհակալություն՛ն: Հարցս կրկին վերաբերում է մանկապարտեզներին: Կցանկանայի մի փոքր իրազեկեիք, թե ի՞նչ ընթացքի մեջ է մանկապարտեզների տարածքներն օտարված կամ վարձակալություններից ազատելու գործընթացը: Միանգամից ասեմ, որ հարցս չի վերաբերում հասարակական կազմակերպություններից ազատելուն, այլ դրանցից գատ: Այս համատեքստում մենք նամակ ենք ստացել, որին, որպես ավագանու անդամ, կցված եմ եղել նաև ես: Նամակում հարց էր բարձրացվել Լենինգրադյան փողոցի վրա գտնվող նախկին, հանրահայտ մանկապարտեզի շենքի օտարման վերաբերյալ:

Հարցը վերաբերում է նաև նրան, թե ի՞նչ փուլում է այդ շենքում իրականացվող, վաղուց խոստացված վերանորոգման աշխատանքները, արդյոք դրանք իրականացվում են, թե՛ ոչ: Ինչու՞ մենք չենք փորձում մեր համայնքային սեփականության հետևից գնալ, հասկանալ, թե որքան նպատակային է դա օգտագործվել և կա արդյոք հիմքեր այն հետ կանչելու համար: Շնորհակալություն՛ն:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանեն քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը և աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ պարոն Արսեն Ամյանը:

Խնդրե՛մ պարոն Վիրաբյան:

### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն՛ն: Հարցի առաջին մասի վերաբերյալ, ասեմ, որ, բնականաբար, մենք գիտակցում ենք, որ համայնքային ենթակայության մանկապարտեզների նպատակային ուղղվածությունը պահելն առաջնային խնդիր է, ինչպես նաև աշխատանքների իրականացումը կոնկրետ այն շրջանակներում՝ ինչը ենթադրում է մանկապարտեզի շենքը:



Մանկապարտեզներում գործում են բազում կազմակերպություններ, կա գույքագրում, կա կազմակերպությունների հստակ ցանկ, որոնք իրավական տարբեր հիմքերով գործում են մանկապարտեզներում:

Այն կազմակերպությունները, որոնք գործում են առանց իրավական հիմքերի, դրանց հետ տարվող աշխատանքները շատ ավելի հեշտ են: Այն կազմակերպությունները, որոնք գործում են իրավական հիմքերով, և այդ տարածքներն այժմ անհրաժեշտ են հավելյալ խմբեր բացելու համար, փորձում ենք գտնել իրավական ճանապարհ, որպեսզի կարողանանք հետ վերադարձնել տարածքները մանկապարտեզներին:

Այս խնդիրն առաջ եկավ այն ժամանակ, երբ քաղաքապետի կողմից եղավ հստակ հանձնարարական՝ գտնել ճանապարհներ մանկապարտեզներում նոր խմբեր բացելու և հերթագրված **8000** երեխաններին տեղավորելու համար:

Գիտեք, որ երկար տարիներ այդ հարցը չի եղել ուշադրության կենտրոնում, շրջանցվել է՝ ֆինանսական միջոցների բացակայության և այլ պատճառներով: Ամեն դեպքում հիմա կա կամք, որպեսզի մենք այս խնդիրը հիմնովին վերացնենք:

Աշխատանքներ են տարվում, որպեսզի մանկապարտեզներում գործող կազմակերպությունները, հնարավորինս արագ, ազատեն այդ տարածքները: Կան կազմակերպություններ, հատկապես, հասարակական գործունեություն ծավալող, որոնք կարևոր են քաղաքի համար, իսկ կան կազմակերպություններ, որոնց գործունեությունը կարևոր է միմիայն իրենց համար: Այս գործընթացում հաշվի են առնվում այդ բոլոր բաղադրիչները: Այն հասարակական կազմակերպությունները, որոնց գործունեությունը կարևոր է համայնքի համար, փորձում ենք գտնել այլ մեխանիզմներ, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գործունեությունը շարունակել:

Վարչական շրջանների ղեկավարներն իրականացրել են իրենց վարչական շրջաններում գործող մանկապարտեզների գույքագրումը, բոլոր տվյալները հստակ կան: Ճիշտ է առաջնահերթությունը տրվել է ՄԱԿ-ի ծրագրով հաստատված այն մանկապարտեզներին, որոնցում ուղղակի տարբերակ չկա այլ կազմակերպությունների գործունեությունը շարունակելու, որովհետև կա հստակ նախապայման ամբողջական ազատումից հետո նոր կատարել վերանորոգման աշխատանքները:

Այս պարագայում, ցավոք սրտի, ստիպված պետք է համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հասարակական կազմակերպություններին մանկապարտեզների տարածքից ազատել և այլ ուղիներ գտնել նրանց գործունեությունը շարունակելու համար:

### **Արսեն Ամյան**

-Պարոն Վիրաբյանը, ըստ էության, հարցի հիմնական մասին պատասխանեց, ավելացնելով, որ քաղաքապետարանի կողմից արդեն իսկ թվով 54 սուբյեկտի հետ աշխատանքներ իրականացվել են:

Այս գործընթացում ներգրավված են նաև վարչական շրջանները: Քաղաքապետի կողմից վարչական շրջանների ղեկավարներին տրվել է համապատասխան լիազորագիր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, տարածքներն ազատելու ուղղությամբ իրավական մեխանիզմներ կիրառելու համար:

Նշեմ, որ աշխատանքներ են տարվում, ինչպես սեփականության կամ օգտագործման վկայական չունեցող տարածքների հետ կապված, որոնք հնարավոր է այս պահին ազատել, այնպես էլ օգտագործման իրավունք ունեցող տարածքների մասով: Այդ ուղղությամբ իրավական մեխանիզմներ է կիրառվում, որոշ ժամանակ հետո իրավունքները կդադարեցվեն նաև ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից նշած մանկապարտեզի վերանորոգման հարցին, դա մեր գործառնություններից դուրս է, բայց անհրաժեշտության դեպքում կարող ենք քննարկել այդ հարցը և փորձել լուծում գտնել:

### **Մաթենիկ Մկրտչյան**

-Այդ գույքի նկատմամբ բոլոր պարտավորություններն արդյոք կատարվել են այն անձի կողմից ով ձեռք է բերել տարածքը:

### **Արսեն Ամյան**

-Նշեմ, որ Երևանը համայնքի կարգավիճակ ստանալուց հետո, երբ Երևանի քաղաքապետարանին է անցել այդ գույքը, մանկապարտեզների օտարման դեպք չի եղել:

Ձեր նշած դեպքերը, հավանաբար շատ ավելի հին են, հիմնականում 1990-ական թվականներին են տեղի ունեցել:

### **Մաթենիկ Մկրտչյան**

-Լենինգրադյան փողոցի վրա գտնվող մանկապարտեզի մասին է հարցը:

### **Արսեն Ամյան**

-Այդ մանկապարտեզը Երևան համայնքի կողմից չի օտարվել, այլ Երևանը՝ համայնքի կարգավիճակ ստանալուց առաջ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի ավագանու կողմից:

### **Մաթենիկ Մկրտչյան**

-Շնորհակալություն՝ն պարոն Ամյան, այդ դեպքում միասին կքննարկենք այդ մանկապարտեզի հարցը:

## **Արսեն Ամյան**

-Շատ լավ:

## **Սաթենիկ Մկրտչյան**

-Պարո՛ն Վիրաբյան, նշեցիք, որ գույքագրման աշխատանքներ են կատարվել, արդյոք դրանց մեջ են մտնում մասնավոր մանկապարտեզներին կամ դպրոցներին տրված տարածքները: Ես հասկանում եմ, որ դա մեկ օրում ազատելու կամ լուծելու հարց չէ, բայց արդյոք նախատեսվում է որևէ գործընթաց մասնավորներին տրված համայնքային գույքն այլ տարածքներով փոխարինելու համար, կա այդպիսի մոտեցում, թե՛ ոչ:

## **Տիգրան Վիրաբյան**

-Գույքագրված են այն բոլոր կազմակերպությունները, որոնք, անկախ իրենց ծավալված գործունեությունից, գտնվում են քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների շենքերում:

## **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյան, խնդրե՛մ:

## **Հռիփսիմե Առաքելյան**

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, հարցս կրկին վերաբերում է Լեռնի փողոց հ. 35 հասցեին: Ինչու եմ ասում կրկին, որովհետև նախորդ տարվա ընթացքում այս խնդրի մասին, բավականին ծավալուն էլույթի տեսքով, բարձրաձայնել եմ, դիմել եմ նաև ԻՍ ՔԱՅԼԸ և ԼՈՒՅՍ խմբակցությունների իմ գործընկերներին:

Շնորհակալություն պետք է հայտնեմ ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության անդամներ Արթուր Իսախիրյանին և Էռնեստ Ավանեսովին, ովքեր շատ արագ արձագանքեցին այս խնդրին: Պարո՛ն քաղաքապետ, դիմել էի նաև Ձեզ և Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին, որպեսզի փորձենք գոնե մեկ անգամ ուշադրություն հրավիրել այս խնդրին և այցելենք Լեռնի փողոց հ.35 հասցե:

Պարո՛ն քաղաքապետ, դա դիմում-նամակի տեսքով չեմ ներկայացրել Ձեզ, որովհետև արդեն ընթացակարգերին հստակ ծանոթ եմ և դիմում-նամակի տեսքով որևէ հարց բարձրացնելու դեպքում, զիտեմ, որ նույնաբովանդակ, ոչինչ չասող պատասխան եմ ստանալու: Խնդրի մասին ավագանու նիստի ընթացքում բարձրաձայնեցի, նիստից անմիջապես հետո շատերը մոտեցան, թե գնանք-տեսնենք և այլն: Շնորհակալ եմ Արթուր Իսախիրյանին, որ գոնե նա այցելեց այդ ընտանիքին և պարբերաբար կապի մեջ է նրանց հետ:

Գիտեք անգամ լուսանկարների տեսքով կամ տարատեսակ բարդ համադասական, ստորադասական նախադասություններ կազմելով և տարբեր ածականներ օգտագործելով չեմ

կարող նկարագրել, թե դա ինչ հյուղակ է՝ հին երևանցիների մի բնակարան: Այս մարդիկ **1991**թ. սկսած՝ դիմում-բողոքների, խնդրանքների տեսքով դիմել են քաղաքապետարան, մի ամբողջ տրցակ կա այս հարցի վերաբերյալ: Երևանը քանի քաղաքապետ ունեցել է, այդքան անգամ դիմել են քաղաքապետարան, բայց հարցը տեղից չի շարժվել, որևէ մեկը նույնիսկ չի այցելել այդ գետտոն, որը գտնվում է Երևանի սրտում, Երևանի կենտրոնում:

Խնդրանքս է, քաղաքային իշխանության որևէ բարձրաստիճան պաշտոնյա, ես էլ կգամ, կարծում եմ Արթուրն էլ կգա, գոնե մեկ անգամ **5** րոպեով մտնենք այդ գետտոն: Տուն ասելը, անշնորհակալ մի բան է, որովհետև դա տուն չէ, չեմ ուզում ավելի կոպիտ բնորոշումներ տալ:

Դուք այն ժամանակ էլ հակադարձեցիք, ասեցիք, որ մենք այդ կարգի շատ ու շատ խնդիրներ ունենք Երևանում: Այո՛, Երևանում բնակարանային խնդիրները շատ են, շատ անտուն բնակիչներ ունենք: Ես կրկին խնդրում եմ Ձեզ՝ պարոն քաղաքապետ, գալ, տեսնել, թե ինչ պայմաններում է այդ բարեկիրթ ընտանիքն իր գոյն ապահովում Երևանի կենտրոնում, սոսկալի, զազրելի տեսարան է:

Պարոն Մնացականյան, այն ժամանակ ես Ձեզ մոտեցել եմ, խոսել ենք այս մասին: Դուք բարեկիրթորեն ինձ խոստացաք, որ անպայման կգնաք, սակայն ոչ ոք չի գնացել այնտեղ: Ես խնդրում եմ այս հարցը պահել ուշադրության կենտրոնում:

### **Հայկ Մարության**

-Ավագանու հարգելի՛ անդամներ, մի քանի օր առաջ քաղաքացիների ընդունելությունն էր ինձ մոտ՝ **11** ժամ տևողությամբ և կես ժամ ընդմիջումով: Նրանց **90%** եկել էին նույն խնդիրներով: Այն լուսանկարները, որ ցույց էին տալիս, վստահեցնում եմ նույն կարգի, նույն տիպի իրավիճակ էր տիրում: Տարեց կին, ով ապրում է գործարանում, ընտանիք, որի երեխաներն անընդհատ բրոնխիտ ունեն, որովհետև տունը խոնավ է, ահավոր վիճակ է: Բազմաթիվ նմանատիպ խնդիրներ կան, այս դեպքում թող ավագանին որոշում կայացնի, որ տվյալ հասցեների մարդկանց անհրաժեշտ է ֆինանսական աջակցություն կամ առաջին **1000** քաղաքացիները, ովքեր կդիմեն, բոլորին աջակցում ենք, բյուջեն սպառում ենք և դրանով սահմանափակվում ենք:

Պետք է հասկանալ այն չափորոշիչները, ինչով պետք է առաջնորդվենք և աշխատենք: Ինչու՞ պետք է մի ընտանիքի բնակարան հատկացնենք, մյուսներին՝ ոչ: Ասեմ ավելին, կան հազարավոր ընտանիքներ, որ դա էլ չունեն, ոչինչ չունեն, ուղղակի վարձով են ապրում, վաղը, որ վարձի գումարը վերջանա, հայտնվելու են դրսում:

Այդ նույն խնդրով ընդունելության էր եկել Սարի թաղում բնակվող ընտանիքներից մեկի ներկայացուցիչը: Բոլորիդ ծանոթ է Սարի թաղի խնդիրը, որը միշտ իմ ուշադրության

կենտրոնում է: Խոսքն ստորգետնյա ջրերի մասին է, որոնք լցվում են տուն, խոնավ է, բոլորը հիվանդ են: Այդ օրը եկած բնակիչների **90%** կոնկրետ բնակարանային խնդիր ունենին, և ես չգիտեի իրենց ինչ պատասխանել, ամեն մեկին ցանկանում էի օգնել: Միայն ինձնով պայմանավորված որ լինեք, այդ օրը ովքեր եկել էին, բոլորին կօգնեի ու կլինեի բարի քաղաքապետ: Այնինչ՝ ստիպված եմ եղել ասել, որ չեմ կարող դա անել, որովհետև եթե **10** հոգուն օգնեմ, մնացած **1000**-ը կհարցնի՝ բա մենք: Վստահեցնում եմ Ձեզ, որ պայմանները հավասար են:

Արցախի փողոցի **հ. 8** և **հ. 10** շենքերը գիտեք, Արզումանյան փողոցի շենքերը, որն ասեմ, իսկապես շատ են: Վարձով ապրող մարդիկ, ամենապարզ օրինակն են, նրանք ընդհանրապես տուն չունեն: Ինչ է եղել իրենց ընտանիքներում կամ ինչ պատճառով են մնացել անտուն, դա այս պահին կարևոր չէ: Վարձը վերջացավ, մյուս օրը դուրսն է հայտնվելու: Համատեղ որոշում կայացրեք ինչպես հարցին լուծում տալ, ես իրականացնեմ:

### **Հոիփսիմե Առաքելյան**

-Անհրաժեշտ է այս ամբողջ տեղեկատվությունը, որ հավաքվել է քաղաքապետարանում, պետք է համակարգել, բաժանել փուլերի, որոշել դրանցից որոնք են առաջնային՝ որոշակի լուծումներ գտնելու համար: Ձեր նշած խնդիրների մասին տեղյակ եմ, որ կան բազմաթիվ խնդրահարույց հարցեր: Պետք է ինչ-որ տեղից սկսել, ըստ առաջնահերթության փորձել թեկուզ չնչին բյուջեով կարգավորել այդ խնդիրները: Հակառակ դեպքում շարունակ կասենք, եթե սա անենք, այն մյուսը կմնա և հարցը լուծում չի ստանա:

Խնդրում եմ մեկ անգամ այցելել Լեռնի փողոց **հ. 35** հասցե, եթե Ձեր զբաղվածության պատճառով չեք կարող գալ, Կենտրոն վարչական շրջանի պատասխանատուն թող այցելի այդ տուն: Հավատացեք այդ խնդիրը կլուծեք, եթե դա տեսնեք:

### **Հայկ Մարության**

-Տիկի՛ն Առաքելյան, **100%**-ով հավատում եմ Ձեզ, բայց օրինակ եմ բերում, որ մարդ կա դա էլ չունի, այստեղ ո՞րն է ավելի առաջնային: Ավագանու հարգելի անդամներ ինչ որոշում կայացնեք, քաղաքապետարանն այդպես էլ կվարվի, բայց պետք է հստակ հասկանանք, ինչն է մտնում քաղաքապետարանի լիազորությունների մեջ, ինչը՝ ոչ: Եթե մեր լիազորությունների սահմաններում է մարդկանց տուն տրամադրելը, ուրեմն մեր բյուջեն չպետք է լինի մոտ **20** մլրդ. դրամ, այլ՝ **200** մլրդ. դրամ: Պետությունը պետք է **20** միլիարդից բացի **180** մլրդ. էլ տրամադրի, որպեսզի արագ շինարարություն կազմակերպվի և բոլոր կարիքավորների բնակարանային հարցերը լուծվեն, սակայն **20** մլրդ. դրամով հազիվ մայրաքաղաքի խնդիրներն ենք կարողանում լուծել: Պարբերաբար այցելում եմ նմանատիպ տներ, չգիտեմ այդ մարդկանց ինչ պատասխանել: Ներկայացնում եմ օրենքը, ստացվում է, որ իրենց մերժում

եմ, չեմ կարողանում հարցերին լուծում տալ, քանի որ դա մեր լիազորություններից դուրս է: Ես կգնամ, աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ պարոն Հարությունյանն իմ հանձնարարությամբ այցելում է վթարային շենքերը, լուսանկարները և տեսաձայնագրությունները ներկայացնում է ինձ: Հասցեներով, անուններով բոլորին գիտեմ, այդ պահին փլուզման խնդիր լինելու դեպքում անձամբ կազմակերպում եմ մարդկանց դրսում չմնալը: Քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հիվանդանոցում կազմակերպել ենք հրատապ ընդունման կետ, սոցիալական ապրուստի մի վայր, որտեղ մարդկանց կարողանանք տեղավորել, մինչև հարցին լուծում տրվի: Ինձ համար սա շատ ցավալի թեմա է, իսկապես այդ մարդկանց հոգսով ապրում եմ:

Միասին կարող ենք դիմել ՀՀ կառավարություն, քանի որ Երևանում բնակվում են հանրապետության բնակչության գրեթե կեսը, Երևան համայնքն ինքնուրույն չի կարողանում լուծել բոլորի հարցերը, խնդրում ենք մասնակից լինել այս հարցերի լուծմանը: Մեր բյուջեով հնարավոր չէ այս բոլոր հարցերին լուծում տալ:

#### **Հոփսիմե Առաքելյան**

-Առաջարկում եմ այս թեման համապատասխան հանձնաժողովներում քննարկել, եզրակացություններ անել և դրա արդյունքում ստեղծել կից ժամանակավոր հանձնաժողով կամ խորհուրդ: Այս խնդիրները պետք է բերել օրակարգ և հասկանալ ինչպես դրանք լուծել: Այլապես կարող ենք այսպես անընդհատ խոսել և Դուք էլ, պարոն քաղաքապետ, ասեք, որ չեք կարողանում այս հարցերը լուծել: Անհրաժեշտ է ինչ-որ տեղից սկսել:

#### **Հայկ Մարության**

-Ես չեմ ասում չեմ կարող, ասում եմ, որ մեր լիազորություններից դուրս է: Եկեք դիմենք Ազգային ժողով, որպեսզի փոխեն համայնքի լիազորությունները:

#### **Հոփսիմե Առաքելյան**

-Եթե հարկավոր է դիմենք ՀՀ կառավարություն:

#### **Հայկ Մարության**

-Այս հարցերի լուծման համար միայն գումար է անհրաժեշտ, գումար հայթայթեք, ամեն ինչ կկազմակերպեմ: Նախապես ասում եմ, համաձայն եմ այս հարցի լուծման Ձեր ցանկացած առաջարկությանը, գործող տարբերակներ առաջարկեք, իմ լիազորությունների և ուժերի սահմաններում՝ որպես քաղաքապետ և քաղաքացի կանգնած եմ ձեր կողքը:

#### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրե՛մ:

### **Դավիթ Խաժակյան**

-Պարո՛ն քաղաքապետ, կցանկանայի իմանալ Ձեր դիրքորոշումն այն գործարքի մասին, որը նախորդ ամսին էր տեղի ունեցել, խոսքը քաղաքի կողմից բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների ձեռքբերմանն է վերաբերում:

Առաջին հարցս վերաբերում է հետևյալին, քաղաքապետարանը, որպես գնորդ կողմ, եթե պարզելիք, որ **414** մլն. դրամի գործարքում «Կամազ Արմենիա» ընկերությունը **30** մլն. դրամի շահույթ է ունեցել, ինչպիսի՞ վերաբերմունք կդրսևորեիք: Արդյոք այս շահույթը համաչափ է տվյալ գնմանը:

### **Հայկ Մարության**

-Կարծում եմ եթեներով չեմ կարող խոսել, ամեն ինչն ունի իր սահմանները, պետք է ինչ-որ սանդղակ լինի՝ ըստ որի կարող եմ պատասխանել: Չեմ կարող ասել այդ ավտոմեքենաները բերելու ընթացքում ով ինչ մարժա պետք է ունենա, կան հատուկ վարչություններ, որոնք դրանով զբաղվում են, պետք է գնահատեն և ինձ զեկուցեն:

### **Դավիթ Խաժակյան**

-Այդ դեպքում գուցե որևէ վարչության պետ պատասխանի այդ հարցին:

### **Հայկ Մարության**

-Ես չեմ հասկանում ինչու՞մն է հարցը:

### **Դավիթ Խաժակյան**

-Հարցը հետևյալն է. տեղի է ունեցել **414** մլն. դրամի գնում և շուրջ **30** մլն. դրամի շահույթ է ստացել« Կամազ Արմենիա» ընկերությունը:

### **Հայկ Մարության**

-Դա հստակ տեղեկություն է, եթե կա համապատասխան փաստաթուղթ, տվեք, մենք կուսումնասիրենք, կպատասխանենք Ձեզ: Անհրաժեշտ է հստակ դիտարկել, հասկանալ ինչու է այդպես եղել:

### **Դավիթ Խաժակյան**

-Գնման գործընթացն արդեն եղել է, պետք է երևի դիտարկած լինեիք:

### **Հայկ Մարության**

-Այդ դեպքում, եթե որևէ խնդիր չի առաջացել, նշանակում է այդ դիտարկումները չեն եղել: Եթե ունեք այլ տեղեկատվություն, ներկայացրեք, հետաքննություն անցկացնենք, անհրաժեշտության դեպքում համագործակցենք քննչական մարմինների հետ, հասկանանք ինչ է տեղի ունեցել:

## **Դավիթ Խաժակյան**

-Պարո՛ն քաղաքապետ, որպես առաջին հարցիս արձագանք, տեղեկացնում եմ, որ մեր հաշվարկներով, և ռուսաստանյան այն գործարանին՝ որտեղից գնվել են մեքենաները, ուղղված հարցումների պատասխաններով հանգել ենք այն եզրակացության, որ «Կամազ Արմենիա» ընկերությունը շուրջ **30** մլն. դրամի շահույթ է ստացել: Մեր հաշվարկները ներառել են նաև առաքումը: Հետաքրքիր կլիներ, որ դուք, որպես պատվիրատու կողմ, հաշվի առնելով, որ կրկին նոր գնումներ են նախատեսված, գնահատելիք և հասկանայինք **30** մլն. դրամ շահույթը շատ է, թե՛ քիչ: Իսկապես ես էլ այս առումով չեմ կողմնորոշվում, այդ պատճառով որոշեցի ավագանու այս նիստին հարցի միջոցով դա ձևակերպել: Որոշեցի չանդրադառնալ ընթացակարգային այն խախտումներին, որոնք եղել են, որովհետև դրանք, թերևս, տեխնիկական են, այստեղ խոսքը բացարձակապես գումարի մասին է:

Երկրորդ հարցս վերաբերում է կանաչապատման գործընթացին, որը բյուջեով նախատեսված է և, երբ քննարկում էինք **2019**թ. բյուջեն, արձանագրեցինք որոշակի կրճատում: Պատասխան եղավ, որ ծավալները պահպանվել են, չեն կրճատվել: Իրականում այն, ինչ նախկինում որպես կանաչապատման ծավալ գրվում էր, ավելի շատ էր, քան փաստացի կար: Այժմ մենք նույն ծավալներով և ավելի քիչ բյուջեով աշխատանքն իրականացնում ենք: Հիմա, հայտերը ՓԲԸ-ների կողմից ներկայացված են, հետաքրքիր է իմանալ հայտերում նշված կանաչապատման գոտիների ծավալը, այս առումով ինչպիսի՞ փոփոխություններ են կատարվել՝ հաշվի առնելով այն դիտարկումները, որ նախկինում կանաչապատ ծավալներն ավելի շատ էին գրվում, քան փաստացի կային:

## **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգարյանը:

## **Հայկ Մարգարյան**

-Նախորդ հարցի հետ կապված, պարոն Խաժակյան, հերթական անգամ վստահեցնում եմ, որ **9**-ը մեքենաների գնումը ընթացակարգի որևէ խախտում չի առաջացրել, ամբողջ գործընթացը տեղի է ունեցել «Գնումների մասին» օրենքի տառին համապատասխան: Դուք այդ մասին գրություն եք ներկայացրել, այդ գրությանը նույնպես պատասխանել ենք: Այդ ժամանակից ի վեր սպասում եմ իմ և Ձեր երես առ երես գրույցին, որպեսզի հնարավորություն ունենամ ավելի մանրամասն ներկայացնել: Կշարունակեմ սպասել, վստահ եմ, որ Ձեզ կհամոզեմ, որ ամեն ինչ օրենքի տառին համապատասխան է և մեր պաշտոնավարումից ի վեր ընթացակարգի խախտմամբ որևէ գնում չի իրականացվել:

Մյուս հարցի վերաբերյալ, կանաչապատման գնումները բոլոր վարչական շրջաններում իրականացվել են նախորդ տարվա ծավալներին և առաջադրանքներին



համապատասխան չափերով: Որոշ վարչական շրջաններում ունենք նաև կանաչ հողատարածքների ավելացում, մասնավորապես՝ Դավթաշեն վարչական շրջանում՝ 4 հա, Շենգավիթ վարչական շրջանում՝ 10 հա: Նոր տարածքների ավելացումները կապված են Դավթաշենի էստակադայի շրջակա նոր տարածքի ավելացմամբ և Շենգավիթ վարչական շրջանում Կոմիտասի այգու գործարկման հետ:

### **Դավիթ Խաժակյան**

-Շտրիակալություն, պարոն Մարգարյան: Այս քննարկմանն արդեն պատրաստ եմ, ուսումնասիրել եմ գնման գործընթացն ամբողջությամբ: Պետք է ասեմ, որ, եթե ուսումնասիրեիք «Կամազ Արմենիա» ընկերության կողմից ներկայացված հայտերը և կնքված պայմանագիրը, կտեսնեիք, որ այն փաստացի չի համապատասխանում բերված մեքենաների հետ: Օրինակ՝ պայմանագրում նշված է, որ «կամազ» մակնիշի մեքենաներից մեկն ավելի փոքր տարողությամբ՝ «եվրո-4» ստանդարտի է, որի փոխարեն առաքվել է «եվրո-5», որն իհարկե ավելի լավ է: Առնվազն այս մասով կա անհամապատասխանություն:

Արժեքի վերաբերյալ հստակ նշեցի, որ, եթե մեկ անձից գնում եք իրականացնում, պետք է ճշտեք, արդյոք, այդ գնումն արդարացված է և այն կազմակերպությունը, որը մատակարարելու է, որքան շահույթ է ունենալու և այդ ծախսն արդյունավետ է, թե՞ ոչ: Կլինդրեմ Ձեր արձագանքում ասել «Կամազ Արմենիա» կազմակերպության հետ տեղի՞ է ունեցել հանձնման և ընդունման գործընթաց և այս առումով ինչպե՞ս կարող է «Գնումների մասին» օրենքով սահմանված լինել, որ պետք է տեղի ունենա միջոցների նախատեսում, ապա նոր գնում, սակայն որևէ իրավական ակտով միջոցները չեն նախատեսվել, որովհետև դրանք գնվել են **2018թ.** բյուջեից և ծրագրում որևէ կերպ պետք է արտացոլված լինեին:

Կանաչապատման վերաբերյալ, ուզում եմ հասկանալ, երբ Դուք էլ նշեցիք, որ ծավալները որոշ վարչական շրջաններում մեծացել են, իսկ կանաչապատման բյուջեն կրճատվել է, ինչպե՞ս ենք այդ ծավալներն ավելի քիչ գումարով սպասարկելու:

### **Հայկ Մարգարյան**

-Պարո՛ն Խաժակյան, ինչ վերաբերում է մեր ծրագրին, ամբողջ խնդիրը՝ Ձեր կողմից նշված մեկ անձից գնման հիմքում ընկած հրատապությունն էր, իսկ հրատապություն նշանակում է, որ մեկ տարի առաջ չէր կարող դա պլանավորված լինել: Ծրագրում փոփոխություն արվում է պոստ ֆակտում և գնումների պլանի փոփոխությանը զուգընթաց նաև բյուջեի փաստացի մեր ճշգրտումների արդյունքում, որը դուք կտեսնեք **2018թ.** մեր կատարողականում, որն արդեն ներկայացված է:

Ինչ վերաբերում է մեքենաների ընդունման հանձնման ակտին, այո՛, բնականաբար, մեքենաները ձեռք են բերվել ընդունման հանձնման ակտերի հիման վրա:

Քաղաքապետարանն ընդունել է մեքենաները և անհատույց օգտագործման տրամադրել «Երևանտրանս» ընկերությանը:

Կանաչապատման մասով. ինչպե՞ս ենք ավելի քիչ ծախսով իրականացնելու այդ աշխատանքները: Կարծում եմ հարցը հռետորական է: Իմ պատասխանը գուցե մասնագիտական չհնչի, այդ պատճառով թույլ տվեք չպատասխանել: Վստահորեն կարող եմ ասել, որ արվելու է ավելի լավ, քան արվում էր նախկինում **40%** ավել բյուջեով: Դուք կունենաք հնարավորություն՝ ստուգելու այդ աշխատանքների որակը:

### **Հայկ Մարության**

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սիփան Ասատրյան, խնդրե՛մ:

### **Սիփան Ասատրյան**

-Շնորհակալություն՝ն, պարոն քաղաքապետ Դուք արդեն անդրադարձաք Շենգավիթ վարչական շրջանի մանկապարտեզներից մեկում մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպության հետ կապված խնդրին:

Կցանկանայի մեկ պարզաբանում լսել հետևյալի մասին. թեև հասարակական կազմակերպության տնօրենը թե՛ մեր հանձնաժողովի նիստի, թե՛ Ձեզ հետ ունեցած հանդիպման ժամանակ դրական նախատրամադրվածություն է ունեցել այս հարցի վերաբերյալ, որ իրենք դրսում չեն մնա, բայց, այնուամենայնիվ, պետության հետ համագործակցելու խնդիր կա: Տնօրենն իր ծրագրերի իրականացման նպատակով համագործակցում է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: Որքան էլ մենք դրական տրամադրվածություն ունենանք նրանց նկատմամբ, նրանք դեռևս տարածքի խնդիր ունեն և այդ ծրագրերից օգտվելու համար չեն կարողանում փաստաթղթեր ներկայացնել նախարարություն, որ իրենք ապահովված են տարածքով և այլ: Ասացիք, որ լուծումներ եք փորձում գտնել, կցանկանայի իմանալ կա՞ն նախանշված լուծումներ:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն, իմ հանձնարարությամբ պարոն Վիրաբյանը հանդիպել է ՀԿ-ի նախագահի հետ, խոսել են խնդրի մասին: Այս հարցը պետք է քննարկել նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, որպեսզի, իրավիճակը հասկանալով, հնարավորություն տան իրենց առանց փաստաթղթերի մասնակցել այդ ծրագրերին:

Հարցին ավելի մանրամասն կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրե՛մ:

### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն՝ն հարցի համար: Այս հասարակական կազմակերպության տարածքի հարցը քննարկվել է ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյանի և ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մաթենիկ Մկրտչյանի հետ: Խնդիրը հետևյալն է. հասարակական կազմակերպությունը և նրա ղեկավարությունը տեղափոխման առումով խնդիր է տեսնում: Նրանք գտնում են, որ տեղափոխությունը և այլ տարածքում գործունեության շարունակությունը կարող է խոչընդոտել երեխաներին տարածքի կողմնորոշմանը և այլ հարցերով:

Այդ առումով մեր աշխատանքները դժվարանում են: Մի կողմից կա մանկապարտեզի վերանորոգման ծրագիր, որը հնարավոր չէ իրականացնել առանց հասարակական կազմակերպությունն այդ տարածքից դուրս բերելու, մյուս կողմից այդ կազմակերպության տեղափոխման խնդիրներ կա՝ կապված այլ տարածքում գործունեություն ծավալելու հետ:

Հարցի շուրջ կրկին քննարկումներ են լինելու, կփորձենք տարբերակներ գտնել, որպեսզի և՛ կազմակերպությունը կարողանա շարունակել իր գործունեությունը, քանի որ այդ հասարակական կազմակերպության ծավալած գործունեությունը շատ կարևոր է, և՛ հնարավոր լինի այդ մանկապարտեզն օգտվի ՄԱԿ-ի վերանորոգման ծրագրից:

### **Միփան Ասատրյան**

-Շնորհակալություն՝ն, գուցե հնարավոր լինի ՄԱԿ-ի հետ համագործակցել: Գիտենք, որ Հայաստանը միացել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիային, միգուցե ՄԱԿ-ը, բացառության կարգով, համաձայնություն տա մանկապարտեզը վերանորոգելու: Ես, որպես հաշմանդամություն ունեցող անձ, եթե կարիք լինի, պատրաստ եմ աջակցություն ցուցաբերել:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրե՛մ:

### **Մարկոս Հարությունյան**

-Շնորհակալություն՝ն: Ինձ է դիմել Կոմիտասի պողոտա հ. 37 հասցեում գտնվող Բաֆֆու նախկին դպրոցի հին մասնաշենքում գործող Հայաստանի այլիկենդո կարատեի ֆեդերացիայի նախագահ, աշխարհի և եվրոպայի չեմպիոն Դավիթ Աթանեսյանը: Այդ մարզադպրոց են այցելում շուրջ 200 երեխա: Տարածքը նրանց տրվում է վարձակալության հիմունքներով, որի պայմանագիրն ամեն տարի թարմացվում է: Նշեմ, որ այդ տարածքը տրամադրվել է գրեթե 10 տարի առաջ և մինչ օրս այնտեղ շուրջ 10 մլն. դրամի ներդրում է կատարվել: Ներկայումս նրանք կրկին ցանկանում են ներդրումներ կատարել, սակայն

պայմանագիրն ամեն տարի թարմացվում է, ուստի՝ անորոշ է, թե ի՞նչ ժամկետով տարածքը վարձակալությամբ կտրամադրվի: Հնարավոր է արդյոք այդ տարածքն ավելի երկար ժամկետով վարձակալությամբ տրամադրել, որովհետև շուրջ **10 000** դոլարի ներդրման մասին է խոսքը:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրե՛մ:

### **Տիգրան Վիրաբյան**

-Ցավոք սրտի, քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներից մեծ մասն իրենց սպորտային տարածքները վարձակալությամբ տրամադրում են տարբեր կազմակերպությունների՝ գործունեություն իրականացնելու համար: Այդ տարածքների վարձակալության և աճուրդների հարցով զբաղվում է պետական գույքի կառավարման վարչությունը: Վարձակալման ժամկետները հստակ են, տրվում են մեկ տարով և ամեն տարի թարմացվում են:

Վերջերս, քննարկումների արդյունքում որոշում կայացվեց, որ նույնիսկ չերկարի մեկ տարի ժամկետը, որպեսզի տվյալ կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած խնդիրների արդյունքում հնարավոր լինի պայմանագիրն արագ դադարեցնել: Կան դեպքեր, երբ այդ տարածքները վարձակալած կազմակերպությունները, որոնք հիմնականում ծավալում են այդ սպորտաձևը, որը մեծ մասսայականություն է վայելում, և դպրոցների դահլիճները, որտեղ երեխաներն ֆիզկուլտուրայի դասաժամեր են անցկացնում, վերածում են իրենց իսկ կենտրոնների: Այնպիսի պատկեր է ստեղծվում, որ այդ տարածքներն իրենք են վարձակալությամբ տալիս, որպեսզի երեխաներն անցկացնեն իրենց դասաժամերը:

Այս մասով ունենք հստակ դիրքորոշում, որ պայմանագրային ժամկետները պահեն համահունչ, կազմակերպությունների տնօրենները հետևողականություն դրսևորեն, որպեսզի գործունեությունները ծավալեն ըստ պայմանագրերի:

Մի շարք անհանգստություններ կան նաև զբաղեցրած տարածքների իրական օգտագործվող չափերի և կնքած պայմանագրերի համեմատությունների մասով: Այս հարցերն այժմ խորքային ուսումնասիրության փուլում են և ցավով պետք է նշեմ, որ Երևանի գրեթե բոլոր դպրոցներում պարապում են միայն կարատե:

### **Մարկոս Հարությունյան**

-Շնորհակալությու՛ն: Պարո՛ն Վիրաբյան, այս հարցով ինձ դիմելիս, նշել են, որ կան տարածքներ, որոնք տրամադրվել են **90** տարուց ավել ժամկետով առանց որևիցե վարձավճարի՝ անհատույց, չգիտեմ որքանով է ճիշտ այդ տեղեկատվությունը:

Հարցս հետևյալն է. եթե հնարավոր չէ տարածքը երկար ժամկետով վարձակալությամբ տրամադրել, կարո՞ղ է այն անհատույց տրամադրվել, որպեսզի այդ գումարները ներդրվեն և երեխաների համար լավ պայմաններ ստեղծվեն:

### **Տիգրան Վիրաբյան**

-Եթե այդ տեղեկությունը հավաստի է, ապա պատրաստ ենք ընդունել այն տարածող անձին, հասկանալու, թե ինչպես է այդ տարածքը երկարաժամկետ տրամադրվել:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալությու՛ն: Հարցին կանդրադառնա աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը, խնդրե՛մ:

### **Արսեն Ամյան**

-Հարցի վերաբերյալ նշեմ, որ դպրոցների զբաղեցրած տարածքները համայնքային սեփականություն չեն: Երևան համայնքը, ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների՝ Երևանի քաղաքապետի և Երևանի ավագանու, լիազորություն չունի: Լիազորությունը կայանում է նրանում, երբ պետգույքը մրցույթն անցկացնում է, արդյունքները քաղաքապետարանի կողմից հաստատվում են: Հետևաբար այդ հարցով պետք է դիմեք պետգույքի կառավարման վարչություն:

Կառավարության որոշում կա, որը հստակ սահմանում է ժամկետներ և ընթացակարգ: Այդ որոշումը չի նախատեսում երկար ժամկետով նման տարածքների տրամադրում:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան: Նուարդ Վարդանյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցի համար ձայն է տրվում ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արթուր Իսպիրյանին, խնդրե՛մ:

### **Արթուր Իսպիրյան**

-Հարգարժան պարոն քաղաքապե՛տ, հարգելի՛ գործընկերներ, հարցս վերաբերում է քաղաքաշինությանը: Ես ցանկանում եմ նշել մի քանի կառույցներ, որոնք սեփականաշնորհված են, բայց արդեն երկար տարիներ ոչինչ չի իրականացվում:

Դրանցից առաջինը մանկական հանրախանութն է, որը, որքանով տեղյակ եմ, պատկանում է Արա Արրահամյանին, ով **20** տարուց ավելի այնտեղ ոչ մի գործողություն չի իրականացրել: Երկրորդը, որը նույնպես շատ մտահոգիչ է, ըստ իմ ուսումնասիրությունների «Մելլաթ» բանկին պատկանող տարածքն է, որը գտնվում է ՀՀ նկարիչների միության և «Մոսկվա» կինոթատրոնի միջև, որտեղ կրկին **20** տարուց ավելի ոչինչ չի իրականացվել:

Հաջորդը՝ Չարենցի փողոցի հ. 28 կամ 30 հասցեում առկա փոստ է, որը 15 տարուց ավել կա և կրկին ոչինչ չի իրականացվել: Մյուսները՝ Սբ. Սարգիս եկեղեցու հարակից տարածքում գտնվող ստորգետնյա անցումն է, Մոր և մանկան հիվանդանոցի նախկին շենքն է, որը գնվել է, սակայն շուրջ 15-20 տարի ոչինչ չի իրականացվել: Դրանց շարքին են դասվում Երիտասարդական պալատը, Կասկադի վերջնահատվածում գտնվող տարածքը, որն արդեն 15 տարի փորված է: Այդ տարածքը դարձել է վտանգավոր, քանի որ այդտեղ փլուզումներ են լինում և Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի հուշարձանի հարթակում ճաքեր են առաջացել: Խորենացու փողոցի վրա՝ Ոսկու շուկայի հարևանությամբ գտնվող մեծ փոսը, որը նույնպես տարիներ շարունակ այդպես մնացել է և փակել է Անգլիական այգու մուտքը:

Ես նշեցի միայն Կենտրոն վարչական շրջանում գտնվող տարածքները, այդ նույն կարգավիճակում է նաև «Հայրենիք» հանրախանութի շենքը, որը սեփականաշնորհված է և ոչինչ չի իրականացվում: Այսպիսի շատ տարածքներ կան, որոնց սեփականատերերի առջև պետությունն ունի պարտավորություններ, փոխարենն այդ սեփականատերերը ոչ մի պարտականություն չունեն քաղաքացու և պետության նկատմամբ:

Իրականացվում են արդյոք ինչ-որ գործողություններ այս հարցերի կարգավորման ուղղությամբ:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն: Այս խնդրի վերաբերյալ բազմաթիվ քննարկումներ ենք ունեցել իրավաբանական վարչության պետ պարոն Առաքելյանի, ինչպես նաև Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ պարոն Մեսչյանի հետ: Այդ հարցն ի սկզբանե մեր ուշադրության կենտրոնում է եղել: ՀՀ վարչապետի և պարոն Մեսչյանի հետ «Հին Երևան» նախագծի քննարկումների ժամանակ անդրադարձել ենք նաև այս հարցին, որտեղ էս ներկայացրեցի իմ տեսակետն այս հարցի լուծման վերաբերյալ: Շինարարական փոսերը, որոնք փորվել են և տարիներով մնացել, առնվազն այդ մասով պետք է լծակներ ունենաք, որպեսզի ստիպենք կառուցապատողին ավարտին հասցնի այդ աշխատանքները կամ օտարի մեկ այլ անձի, ով դա կիրականացնի: Այս պահին այդ լծակը չկա:

Ինչ վերաբերում է «Մանկական աշխարհ» հանրախանութին, այն չի գործում, բայց շենքի կառուցապատումն ավարտված է, պատուհանները դրված են: Նախկին իշխանությունների օրոք խնդիր կար պատուհանների տեղադրման հետ, սակայն բանակցությունների արդյունքում կարգավորվեց այդ հարցը: Այնուամենայնիվ՝ շենքը մեռյալ վիճակում է և այդտեղ ավելի դժվար գործընթաց է սպասվում, որովհետև շենքի կառուցապատումն ավարտված է: Այստեղ մի դրական հանգամանք կա. շենքն ունի մոտ

**160-**տեղանոց ստորգետնյա ավտոկայանատեղի: Քննարկումներ ենք անցկացնում, որպեսզի այն շահագործման հանձնվի և Երևանի բնակիչները կարողանան օգտվել այդտեղից:

Ճիշտ է՝ դա Ձեր նշած հարցի լուծում չէ, բայց գոնե մասամբ շենքը կշահագործվի հանրության կողմից, ինչ-որ ծառայություն կմատուցի համայնքին:

Այս պահին հստակ կարող եմ նշել, որ որևէ անելիք չունենք: Մեր գործողությունները կարող են լինել իրավական մասով, այսինքն՝ օրենսդրական փոփոխություններ առաջարկենք և Ազգային ժողովին լոբբինգ անենք, որպեսզի այս խնդիրները լուծվեն:

Հարցի իրավական մասով մանրամասն կներկայացնի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը, խնդրե՛մ:

### **Զավեն Առաքելյան**

-Շնորհակալություն: Պարո՛ն Իսախրյան, այս պահի դրությամբ Երևանի քաղաքապետի լիազորությունների մասով օրենսդրական կարգավորումը հետևյալն է. եթե շենքը կամ շինությունն օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, ապա դրա հետ կապված անձին կարող ենք ենթարկել վարչական պատասխանատվության: Ինչ վերաբերում է սեփականության իրավունքով պատկանող շինությունն ընդհանրապես չշահագործելու հարցին, այս մասով օրենսդրական կարգավորում չկա: Այս հարցի լուծման նպատակով քաղաքապետի հանձնարարությամբ Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի հետ փորձում ենք որոշակի լուծումներ գտնել, որպեսզի հնարավորություն ունենաք այս հարցը կարգավորելու:

Միաժամանակ նշեմ, որ այն կիսակառույցները կամ հողամասերը, որոնք կառուցապատման իրավունքով տրամադրվել են և այնտեղ աշխատանքներն սկսվել են ու ավարտին չեն հասցվել կամ ընդհանրապես չեն սկսվել, դրանց մասով ևս առաջարկություններ ունենք, որպեսզի խնդիրն արագ լուծվի: Լուծումը պետք է լինի այնպիսին, որ չխախտվի անձի սեփականության իրավունքը և վերջնական արդյունքում ունենանք քաղաքաշինական նորմերին կամ կանոններին համապատասխան լիարժեք կառուցապատում:

Նշեմ, որ կիսակառույցների հետ կապված որոշակի դեպքերով կան նաև դատական գործընթացներ, որոնք դեռ վերջնական արդյունքի չեն հասել: Ամփոփելուց հետո Ձեզ լրացուցիչ կտեղեկացնենք:

### **Արթուր Իսախրյան**

-Շնորհակալություն:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրե՛մ:

### **Լևոն Զաքարյան**

-Շնորհակալություն՝ն, հարցս վերաբերում է Կարմիր բլուր հնավայրին: Տեղյակ եմ, որ ստեղծվել է քաղաքացիական նախաձեռնություն, որը կոչվում է «Ազատենք Կարմիր բլուր հուշարձանը շինարարական աղբից»: Կցանկանայի իմանալ քաղաքապետարանի դիրքորոշումը առհասարակ Կարմիր բլուրի հետ կապված. ի՞նչ առաջնային խնդիրներ ունենք այնտեղ լուծելու:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն: Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

### **Տիգրան Վիրաբյան**

-Կարմիր բլուրի վերաբերյալ պետք է նշեմ, որ այդ շինարարական աղբը երկար տարիներ այնտեղ է թափվել և մի հատվածն ընդհանրապես աղբի տակ է գտնվում: Տեղյակ եմ նաև այդ նախաձեռնությունից, որն ստեղծվել է որպեսզի կարողանան այդ շինաղբն այնտեղից ազատել, բայց ինչպես գիտեմ նրանք նախատեսում են գումար հավաքագրել այդ աշխատանքներն իրականացնելու համար: Մոտ **20-22** մլն. դրամ է անհրաժեշտ այդ աշխատանքներն իրականացնելու համար: Վաղը պետք է այս հարցը քննարկենք թանգարանի տնօրինության հետ, քանի որ առաջին անգամ է այս հարցը հնչում և, ցավոք սրտի, պետք է նշեմ, որ դա թանգարանի տնօրինության կողմից չի արվել:

Մենք այստեղ խնդիր ունենք, քանի որ քաղաքապետարանի ենթակայության ՀՈԱԿ-ների ղեկավարները, չգիտեմ դա հիշողություն է, թե ինչ է, աշխատում են հնարավորինս քիչ խոսել խնդիրների մասին: Նույնիսկ եթե խոսում են, ապա դրանք զուտ նեղ շրջանակների խնդիրներ են, իսկ ավելի գլոբալ խնդիրներն անտեսվում են: Մոտ օրերս կունենանք հստակ պատասխան, ուսումնասիրություններ կիրականացվեն և կհասկանանք, թե ինչ միջոցներ կարող ենք ձեռնարկել բլուրի տարածքը մաքրելու համար:

Այս երևույթն իսկապես խայտառակություն է, այն մարդիկ ովքեր կարողանում են այդ պատմամշակութային արժեք հանդիսացող տարածքում նման վայրագություն իրականացնել, դա անընդունելի է և դատապարտելի: Քաղաքացիները պետք է իրենց մեջ ունենան հարգանքի նշան իրենց քաղաքի, հատկապես՝ նման կարևոր տարածքների հանդեպ:

Ամեն դեպքում այս հարցն ուշադրության կենտրոնում է, վստահ եմ մոտ ժամանակահատվածում լուծման տարբերակներ կգտնենք:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն, իսկապես սա շատ գլոբալ խնդիր է: Քաղաքում շատ տեղեր կան, որ ուղղակի վերածված են շինարարական աղբավայրի: Քաղաքային իշխանությունները



ուստիկանության հետ համատեղ շատ հաճախ շրջում են, հետևում են, բայց երբ գիշերվա ժամերին այդ աղբը թափում են, մենք չենք կարող **24** ժամ այդ վայրերում հսկողություն սահմանել: Պարզապես անհրաժեշտ է, որ բնակիչները մի փոքր հարգանք ունենան քաղաքի հանդեպ:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյան, խնդրե՛մ: Գայանե Մելքոմ Մելքոմյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցի համար ձայն է տրվում ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արսեն Կարապետյանին, խնդրե՛մ:

### **Արսեն Կարապետյան**

-Շնորհակալություն: Մենք ավելի շատ ուշադրություն ենք դարձնում ջրամատակարարման խնդրին՝ մոռանալով կոյուղաջրերի մասին: Քաղաքի տարածքում կան, այսպես ասած, չմշակված հողեր, որոնք կառուցապատվում են: Կա մի ընթացակարգ, ըստ որի՝ մինչև շինթույլտվություն ստանալը պահանջվում է ջրի և էլեկտրասնուցման պայմանագրեր կնքել, որն էլի թերի պրակտիկա է: Սրան հետո կանդիդատանք: Ինչ վերաբերում է կողոլու հարցին, ուղղակի գծիկ է դրվում, ինչը նշանակում է, որ կոյուղի չկա, և մենք թողնում ենք կառուցապատողի հայեցողությանը, ով ինքն է տարբեր եղանակներով այդ խնդիրը լուծում: Նման հողակտորներ կան Ավան, Նոր Նորք, Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում:

Կարծում եմ սկզբունքային մոտեցում պետք է ցուցաբերվի, եթե կան հողատարածքներ, որտեղ պետք է կառուցապատում լինի, պետք է նախապես կոմունիկացիաներն անցկացվեն, փողոցը փակվի, ասֆալտապատվի, նոր միայն թույլատրվի շինարարություն իրականացնել: Սա կարող է դժվար աշխատանք թվալ, բայց, կարծում եմ, քաղաքակիրթ ուրիշ տարբերակ չկա, քանի որ այդ հողակտորների վրա կառուցված շինություններում սկսում են ապրել, հետո նոր մտածում կոյուղի անցկացնելու մասին:

Հարցի երկրորդ մասը. ավտոլվացման և արագ սննդի կետերի կեղտաջրերը թափվում են ընդհանուր կոյուղու մեջ, քանի որ այդ կետերը չունեն առանձին կոյուղատար համակարգեր և այդ երևույթին առանձնապես ուշադրություն չի դարձվում: Փաստորեն՝ թունավորում ենք բնությունը:

Առաջին հարցս՝ արդյոք չե՞նք կարող ավելի ուշադիր լինել և վերահսկել ստեղծված իրավիճակը:

Երկրորդ հարցս վերաբերում է Շենգավիթ վարչական շրջանում գտնվող Աերացիա թաղամասին: Ուզում եմ բարձրաձայնել, որ դեռ **2012**թ. նախագծվել է և **2015**թ. մեկնարկվել է ծրագիր, որը Ֆրանսիայի կողմից վարկային ծրագրով մոտ **30** մլն. եվրոյի ֆինանսավորվել էր: Հայաստանի համար փաստացի սկսել են կառուցել ժամանակակից և եզակի մաքրման

կայան, որի կառուցումը 2017թ. մասամբ ավարտվել է: Ունենք կայան, որը կարող ենք գործարկել, բայց մինչև օրս չի աշխատում: Գիտեմ, որ դա Երևան քաղաքի լիազորությունների մեջ չի մտնում, որովհետև տրվել է ջրային կոմիտեին:

Ցանկանում էի իմանալ, կարո՞ղ է քաղաքը պահանջատեր կանգնել և ստիպել կառավարությանն աշխատեցնել կայանը, որն էկոլոգիայի և ջրօգտագործման համար շատ կարևոր է, սակայն այդպես էլ չի աշխատում՝ չնայած գումարը ծախսվել է, վարկը մասամբ վերադարձվել է:

### **Հայկ Մարության**

-Եթե չեմ սխալվում ծրագիրը 22 մլն. եվրո արժեք: Հանդիպել ենք կառուցապատողի հետ: Ասեմ, որ շատ լավ կայան է՝ ներկայիս ժամանակներին համապատասխան, ցավոք սրտի չի գործարկվում: Մինչ օրս չեմ հասկանում կայանն ինչու՞ չի աշխատում: Քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը կպատասխանի Ձեր հարցին:

### **Հրայր Մարգարյան**

-Շնորհակալություն: Սպասարկման հետ կապված խնդիրներ են առաջանում, շահագործման արդյունքում, եթե սպասարկումն իրականացնի «Վեոլիա ջուր» ընկերությունը կամ որևէ ուրիշ կազմակերպություն, ինչպե՞ս և ինչի՞ հաշվին է սպասարկման գումարը վճարվելու: Հանդիպել ենք կառուցապատողի հետ, սպասում ենք ՀՀ կառավարությունում կառուցվածքային փոփոխությունների, որպեսզի դիմենք:

### **Հայկ Մարության**

-Այսինքն, այսպես ասած, հորդորենք կառավարությանը, որպեսզի սկսենք շահագործել:

Ինչ վերաբերում է բարձրաձայնած առաջին հարցին, բոլոր վարչական շրջաններում գույքագրում արդեն կատարվել է, գրեթե ամենուր կոյուղագծի հետ կապված խնդիրը կա: Այս տարվա բյուջեով նախատեսել ենք նախագծերի իրականացումը, ինչից հետո քաղաքի ֆինանսական միջոցների հաշվին ընդհանուր կոյուղագծեր կանցկացվեն, և բնակիչները անհատապես կմիանան այդ կոյուղագծին:

-Պարո՞ն Արեյան, լսենք Ձեր պարզաբանումներն այս հարցի շուրջ:

### **Կամո Արեյան**

-Այստեղ խրթին հարց է գոյացել, երբ տեխնիկական մաքրման կայանը կառուցվեց, դա առաջին փուլն էր, դրան պիտի հաջորդեր կենսաբանական մաքրումը: Վերջնական փուլը, որպես այդպիսին, ավարտված չէ, դա միջանկյալ փուլ էր տեխնիկական մաքրման համար: Ավարտին հասցնելու համար պիտի կայանա կենսաբանական մաքրման փուլը, որը բավականին թանկարժեք ծրագիր է, կրկնակի եռակի ավելի, քան այս էր: Սա ընդամենը 11

մլն. եվրոյի ծրագիր էր, վատ կայան չի, կառուցվել է, այն ժամանակ պատվիրակված էր քաղաքապետարանին, և խնդիրը նրանում էր, թե ո՞վ պիտի շահագործեր այս կայանը: Այս հարցում վեճեր եղան, եղան տարընկալումներ, պիլոտային տարբեր փորձարկումներ, բայց, այնուամենայնիվ, մրցութից դուրս մնաց: Այդ կայանը չտրվեց «Վեոլիա ջուր» ընկերությանը վարձակալության, մնաց պետությանը:

Ժամանակին կնքել ենք միջանկյալ պայմանագիր, թե որքանո՞վ կարող է ազդել տեխնիկական մաքրման ծախսերը սակագնի վրա, դա պետք է հաշվարկել շահագործումից մեկ տարի անց, հասկանալու համար ի՞նչ գին կձևավորվի:

Ինչ վերաբերում է կոյուղացման հարցին, նախնական գույքագրումով մոտ **100** կմ մայրաքաղաքի **90** հասցեում **12 000-13 000** բաժանորդի հասնող տարածք կա, որն ի սկզբանե կոյուղացված չէ: Միայն **9**-ը փողոց Ներքին Շենգավիթում է, մոտ **10**-ը փողոց՝ Հաղթանակ թաղամասում: **20** կմ միայն Նոր Խարբերդի ամատանոցային տարածքն է, որը պետք է ունենա կոյուղի:

Այս ծախսերը, ավագանու հարգելի՛ անդամներ, «Վեոլիա ջուր» ընկերության **15** տարվա վարձակալական պայմանագրում ներառված չեն: Նոր կոյուղագծերի կառուցման հարցում «Վեոլիա ջուր» ընկերությունը չունի պարտավորություն: Սա պետության խնդիրն է, վստահաբար ասում եմ, մեր քաղաքի բյուջեն չի բավականացնելու սրան: Առայժմ պետությանը հաջողվել է մայրաքաղաքում կոյուղացնել միայն Սիլիկյան թաղամասը, այն էլ պետական բյուջեի հաշվին: Սրանք ներդրումային հսկայական ծախսերի ծրագրեր են, որոնք, ինչպես նշեց պարոն քաղաքապետը, պետք է հորդորվի ՀՀ կառավարությանը, ջրային կոմիտեին, վարկային առաջիկա ծրագրերում ներառել մայրաքաղաքը, չկոյուղացված թաղամասերը կոյուղացնելու ծրագրի միտումով: Խոսքը տասնամյակներով, ի սկզբանե գոյություն չունեցող կոյուղագծերին է վերաբերում: Այնպես որ սա ներդրումային լուրջ ծրագիր է, որը պետք է ներառվի վարկային ներդրումային ծրագրերի մեջ:

Ինչ վերաբերում է Ձեր մյուս ասածին, պարոն Կարապետյան, դրանք կցկտուր տեղային լուծումների հարցեր են, որոնք «Վեոլիա ջուր» ընկերությունը միացնում է տեխնիկական պայմանով գործողի հետ: Դա ընդլայնում չէ, դա չի բավարարում հանրային պահանջարկը: Այնպես որ, պարոն քաղաքապետ, սա քաղաքի առջև ծառայած լրջագույն խնդիր է և պահանջում է համայնքի բյուջեից դուրս կապիտալ լուրջ ներդրումներ և իմ համոզմամբ դա միայն կարող է իրականացվել վարկային լուրջ ծրագրերի շրջանակներում:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՛ն:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Իզաբելլա Աբգարյան, խնդրե՛մ:

### **Իզաբելլա Արզարյան**

-Հարցս վերաբերում է մի շատ օրհասական խնդրի, որը մտահոգություն է առաջացրել երևանցիների մոտ: Մարդիկ մտածում են, որ քաղաքապետարանն առհասարակ չի ցանկանում զբաղվել այդ հարցով, մտավախություն կա, որ մենք աչքաթող ենք անելու այդ հարցը:

Խոսքը վերաբերում է համատիրություններին, քանի որ մինչ օրս մեր բնակիչները չեն տեսել որևէ իրական քայլ, որն ուղղված կլիներ այդ խնդրի լուծմանը: Այսօր ունենք շատ վատ վիճակ, այն առումով, որ կան բնակիչներ, ովքեր, կարելի է ասել, փողը «պատռում, զցում են», քանի որ նրանց մի մասը պարտաճանաչ վճարում են՝ չստանալով դրա դիմաց որևէ ծառայություն, իսկ մյուս մասը չի վճարում և պահանջում է: Այստեղ ամենավատ վիճակում, երևի թե չեմ չափազանցնի, որ ասեմ, գտնվում են վարչական շրջանները: Փաստացի նրանք են կատարում ծախսերը, որոնց համար բնակիչը վճարում է համատիրությանը:

Ես, որպես ավագանու անդամ, օրական ստանում եմ տասնյակ նամակներ, որոնց մեծ մասը վերաբերում են համատիրության աշխատանքի իսպառ բացակայությանը: Բնակիչները ցանկանում են իմանալ, թե երբ է գործելու այն օղակը, որը ոչ միայն իրենց կյանքը կհեշտացնի, այլ նաև 1-ին հերթին մեր, վարչական շրջանների և քաղաքապետարանի:

Ինչ միջոցներ են նախատեսվում կիրառել այս ուղղությամբ: Այստեղ է գտնվում Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը՝ պարոն Դանիելյանը, ով ղեկավարել է քաղաքի լավագույն համատիրություններից մեկը և լավ ծանոթ է ոլորտին, կցանկանալի լսել նաև նրա տեսակետն այս հարցի շուրջ: Քաղաքացիներն անընդհատ ասում են ազատեք մեզ համատիրությունից, բացատրենք մեր քաղաքացիներին, արդյոք մենք կարող ենք դա իրականացնել:

### **Հայկ Մարության**

-Շնորհավորություն: Հարցին կպատասխանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը, խնդրե՛մ:

### **Արամ Դանիելյան**

-Շնորհակալություն: Հարգելի՛ պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի՛ անդամներ, համատիրությունը, որպես ինստիտուտ, շատ կարևոր բաղադրիչ է քաղաքապետարանի և համայնքի համար: Դեռևս Խորհրդային Միության ժամանակ, քանի որ ապրել ենք պետական սեփականության գույքում, այսինքն՝ բնակարանները հանդիսանում էին պետական սեփականություն, քաղաքի մի բաղկացուցիչ էր «ԺԷԿ» ասվածը, որը տնօրինում էր կենցաղսպասարկման ոլորտը:

Սեփականության ձևը փոխվեց, բնակարանները դարձան մեր սեփականությունը, բայց մտածելակերպն այս առումով որևէ փոփոխություն չունեցավ: Այս համատեքստում ի հայտ եկան համատիրությունների անվան տակ գործող հնարամիտներ, ովքեր սկսեցին բնակչությունից հավաքագրել գումարներ որևէ իրական ծառայություն չմատուցելով դրա դիմաց: Տարիների ընթացքում բնակիչները հասկանալով, որ, որևէ ծառայություն չեն ստանում, սկսեցին չվստահել համատիրություններին: Արդյունքում ձևավորվում է փակ շղթա. համատիրությանը խնդրի մասին տեղեկացնում ենք, ասում է գումարներն այնքան էլ լավ չեն վճարում, որպեսզի լուրջ ծառայություններ իրականացվեն, բնակիչներն էլ ասում են, բայց ինչ են անում, որ ավելի շատ գումար տանք կամ ավել բան պահանջեն:

Կան ծայրահեղ վիճակում հայտնված ընտանիքներ, որոնց բնակարանների մաշվածությունը, այսպես ասած, իրենց հոգսն է, բայց քաղաքը պետք է վերցնի իր վրա: Պարոն քաղաքապետը ճիշտ նկատեց, որ որոշ ժամանակ անց ունենալու ենք հատվածներ, որտեղ բնակֆոնդի մաշվածության լուրջ խնդիր է լինելու: Համատիրությունը հիմնականում պետք է այդ գործով զբաղվի, ինչը չի անում: Այն արագությամբ, որ այս պահին բնակֆոնդը մաշվում է, հիմնական մեղավորությունը համատիրություններինն է, որոնք նպաստում են դրան: Մյուս կողմից բնակֆոնդը, իրականում, մաշված է և համատիրությունները չեն կարող լուրջ ծախսեր կատարել, որովհետև համապատասխան միջոցներ չունեն: Արդյունքում այդ փակ շղթան անընդհատ շարունակվելու է: Այս առումով բնակիչները քաղաքային իշխանությունից ակնկալում են որոշակի փոփոխություններ:

Ես անձամբ այս պահին ուսումնասիրում եմ Արաբկիր վարչական շրջանի որոշ համատիրությունների անցած տարիների ֆինանսական վիճակը, կատարած ծախսերը, թե ինչի դիմաց ինչ են արել: Մի քանի օրինակ ներկայացնեմ ձեզ, որը զավեշտի է նման: Համատիրություն կա **111** շենքից բաղկացած, որի բյուջեն մոտ **100** մլն. դրամ ավել է, **3** տարի առաջ ընդամենը **1** շքամուտք վերանորոգելու համար **3** մլն դրամի ծախս է կատարել, որն իրականացրել է վարկային միջոցի հաշվին: **3** տարի շարունակ **300 000**-ից ավել վարկի մարում է կատարել:

Համատիրությունների խնդիրը խորքային է, տվյալ ինստիտուտը, որը հիմա գործում է չի կարող ծառայել բնակչության այն սպասումներին, որը **21**-րդ դարում պահանջվում է: Մյուս կողմից էլ այն գումարներով, որ համատիրություններն այս պահին գործում են, իրականում հնարավոր չէ ունենալ որակյալ ծառայություն, սակայն, եթե լինի սրտացավ և հաշվետվողական մոտեցում, հնարավոր է որոշ արդյունքի հասնել: Մեր շենքերի օրինակներով կարող եմ ասել, որ համատիրությունը **45** դրամով կատարում է այնքան

ծառայություններ, որից մի բան էլ պակաս կատարում է Հյուսիսայի պողոտայի շենքերի համատիրությունը ամսական **28 000** դրամի դիմաց:

Այստեղ ընդամենն արդյունավետության խնդիր կա և օրենքի որոշակի բացեր: Համատիրություններն ունեն գանձման խնդիր, որը պետք է օրենքով կարգավորվի, բացի այդ՝ օրենքով պետք է կարգավորվի ֆինանսապես անապահով ընտանիքների կողմից համատիրության պարտադիր վճարումների խնդիրը: Խնդիրները պետք է լուծվեն համակողմանի: Իմ դիրքորոշում այն է, որ համատիրությունները պետք է դառնան կարևոր օպերատորներ:

Իրականում համատիրությունները պետք է փոխարինվեն շահույթ հետապնդող ընկերությունների, որոնք հստակ կիմանան ինչի համար են մատուցում տվյալ ծառայությունները: Բնակչությունը, իրականում, իբրև թե հետևում է համատիրությունների կողմից կատարած աշխատանքներին, բայց որևիցե վերահսկողություն չունի կատարված ծախսերի վերաբերյալ:

#### **Հայկ Մարության**

- Շնորհակալություն, պարոն Դանիելյան:

Հարցի իրավական մասով կներկայացնի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը, խնդրե՛մ:

#### **Զավեն Առաքելյան**

-Համատիրությունների հետ հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքով, «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ինչպես նաև «Համատիրությունների մասին» օրենքներով: «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքով ընդհանուր օգտագործման ամբողջ այդ տարածքները, որոնք ենթակա են պահպանման բնակիչների կողմից, հանդիսանում են այդ բնակիչների սեփականությունը: Դրանց մեջ մտնում են տանիքը, նկուղը, ընդհանուր շքամուտքերը, վերելակները և այն ենթակառուցվածքները, որոնք անհրաժեշտ են այդ շենքի ամբողջականությունն ապահովելու համար: Քաղաքապետարանի կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերությունները կայանում են նրանում, որ ՀՀ կառավարության կողմից և օրենքով սահմանված կարգով կան պարտադիր նորմեր, որոնք շենքի սեփականատերերի կողմից ենթակա են կատարման՝ ի դեմս կառավարման մարմինների, դրանք համատիրություններն են կամ լիազորված կառավարիչները:

Այդ գործընթացի նկատմամբ հսկողությունն իրականացվում է համայնքի ղեկավարների կողմից, ավագանու որոշմամբ դա պատվիրակվել է վարչական շրջանների ղեկավարներին: Հաշվի առնելով այն փաստարկները, որոնք նշվեցին, բնականաբար, այդ

աշխատանքներն իրենց բնույթով, ծավալով, որակով գոհացուցիչ չեն և դրանց հանդեպ լիարժեք հսկողություն իրականացնելը հնարավոր չէ: Դրանից ելնելով՝ ներկայումս ՀՀ կառավարության հետ համատեղ ՀՀ արդարադատության նախարարությունում կա «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքի նոր նախագիծ, որում ընդգրկված են գրեթե բոլոր այս հարցերի կարգավորումները, իհարկե այն դեռևս լրամշակման փուլում է: Աշխատանքային պայմանավորվածության կարգով, լրացուցիչ լրամշակումից հետո, կարծիք ստանալու նպատակով, այն կներկայացվի Երևանի քաղաքապետարան, որպես առաջին շահառուներից մեկը: Մենք կներկայացնենք նաև վարչական շրջանների ղեկավարների կարծիքին: Այս գործընթացում կարող ենք նաև ներգրավել ավագանու անդամներին, որպեսզի ստանանք այն հստակ օրենքը, որը լիարժեք հնարավորություն կընձեռի ապահովելու շենքերի կառավարումը:

#### **Հայկ Մարության**

-Պարո՛ն Առաքելյան, մինչ օրենքի ուժի մեջ մտնելը, իրավական առումով ինչ է հնարավոր անել, եթե որևէ շենքի բնակիչներ հավաքվում են և որոշում դուրս գալ համատիրությունից:

#### **Զավեն Առաքելյան**

-Շենքի բնակիչները կամ շենքի սեփականատերերն իրենք են որոշում այս կամ այն համատիրությանը միանալու հարցը: Նրանք ցանկացած պահի ձայների մեծամասնությամբ հնարավորություն ունեն դուրս գալ համատիրությունից, ստեղծել նոր համատիրություն կամ ներգրավել նոր լիազորված կառավարչի, ով իրենց պատկերացմամբ հնարավորություն կունենա մատուցել լավագույն ծառայությունը, բնականաբար, բնակիչների ֆինանսական միջոցների հաշվին:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալությո՛ւն:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Մեսրոպ Պապիկյան, խնդրե՛մ:

#### **Մեսրոպ Պապիկյան**

-Պարո՛ն քաղաքապետ, ես հանում եմ իմ հարցը, քանի որ այն վթարային շենքերին էր վերաբերում, որի մասին Դուք արդեն խոսեցիք:

#### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Սերգեյ Սարգսյան, խնդրե՛մ: Սերգեյ Սարգսյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցի համար ձայն է տրվում ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանին, խնդրե՛մ:

## **Սուրեն Էյրամջյան**

-Պարո՛ն քաղաքապետ, այս հարցին ցանկանում էի դեռևս դեկտեմբեր ամսին կայացած հարց ու պատասխանի ժամանակ անդրադառնալ, քանի որ նախատոնական շրջանում այն բավականին ակտուալ էր, բայց չստացվեց, որովհետև օրակարգը բավական հագեցած էր: Այնուամենայնիվ՝ այսօր կհնչեցնեմ հարցը, որովհետև, կարծում եմ, դեռևս ակտուալ է:

Խոսքը վերաբերում է քաղաքապետարանի ենթակայության թատրոնների կողմից տրամադրվող տոմսերին, որոնք շրջանառվում են դպրոցներում: Ահազանգեր են եղել ծնողների կողմից, որ որոշակի «պլան» է դրվում թատրոնների կողմից այդ տոմսերի սպառման մասով: Ծնողների մի մասը, բնականաբար, կաշկանդված են և ինչ-ինչ պատճառներով համաձայնվում են, ոմանք հրաժարվում են: Իմ խորին համոզմամբ դա պետք է լինի կամավոր սկզբունքով, գրավչությամբ պայմանավորված, այլ ոչ թե պարտադրանքի: Սրանից բխող մեկ այլ կարևոր հարց է ծագում, որին կուզեի անդրադառնալ. ի վերջո մենք այստեղ գործ ունենք նաև կանխիկի շրջանառության հետ, որովհետև այդ տոմսերը ձեռքից ձեռք են վաճառվում: Արդյոք դա ինչ-որ ձև վերահսկվում է, որովհետև ակնհայտ կոռուպցիոն դրսևորումների ռիսկ կա այստեղ և կարծում եմ կանոնակարգված դաշտ բերելու հարց ունենք:

## **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

## **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալությու՛ն հարցի համար: Դպրոցներում վաճառվող տոմսերի հետ կապված նշեմ, որ Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ ընդամենը 3 թատրոն կա, մնացած թատրոնները ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության են: Ինչ վերաբերում է դպրոցներին, բավմիցս նշել ենք, որ դպրոցներում արգելվում է ցանկացած տիպի դրամահավաքությունը: Քաղաքապետի՝ դպրոցների տնօրենների հետ հանդիպման ժամանակ օրակարգային հարցերից էր նաև դպրոցներում ցանկացած տիպի դրամահավաքությունն արգելելը: Ահազանգեր են լինում, որ դպրոցներում տոմսային տնտեսությունների գումար հայթայթելու դրամահավաք է իրականացվում, որը հաճախ կապում են ծնողական խորհուրդների, ինչպես նաև մշակութային կառույցների հետ երեխաների առնչությունն ինքնուրույն կազմակերպելու հետ: Այդ ամենն արվում է ոչ միայն մեր ենթակայության թատրոնների մասով:

Անդրադառնալով հարցի երկրորդ մասին՝ նշեմ, որ սա իրոք շատ ցավոտ հարց է: Երևանի քաղաքապետարանը մինչ այս չի ունեցել տոմսային տնտեսության վարման կարգ:



Դա իրենից ենթադրում է, թե ինչ սկզբունով պետք է տպագրվեն տոմսերը, թե որ ներկայացման համար ինչ գնային պիտակավորում պետք է լինի, պահպանման ժամկետը քանի տարի պետք է լինի, պետք է հետևել տոմսերի հետագա այրմանը, որպեսզի հնարավորություն չտրվի կոռուպցիոն մեխանիզմներին: Մշակել ենք տոմսային տնտեսությունների վարման նոր կարգ, որը հանձնված է քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող բոլոր այն կառույցներին, ՀՈԱԿ-ներին, որոնք ունեն կանխիկի շրջանառություն: Տոմսային տնտեսության վարման այդ կարգը սահմանում է այն բոլոր չափորոշիչները, որոնք պետք է պահպանեն ՀՈԱԿ-ները՝ իրենց տոմսային տնտեսությունն իրականացնելիս:

Կոռուպցիոն մեխանիզմներից խուսափելու համար մի շարք բաղադրիչներ են բերված վարման կարգի մեջ, որպեսզի հնարավորություն չտրվի ՀՈԱԿ-ի ղեկավարին շրջանցելու տոմսային տնտեսության վարման կարգը և գործընթացը տանելու դեպի սովեր: Ճիշտ էք նշում, հաստիքացուցակների քննարկման ժամանակ նկատեցինք, որ այնտեղ բացակայում են մենեջմենթի մասնագետները: **2019թ.** ունենալ մշակութային կազմակերպություն և հաստիքացուցակում չունենալ մենեջմենթի մասնագետ, դա ուղղակի զավեշտալի է:

Մենք պարտադրել ենք, որպեսզի իրենք գիտակցեն, որ հաստիքացուցակներում մենեջմենթը շատ կարևոր է: Այն կազմակերպությունները, որոնք ժամանակի ընթացքում կկարողանան մենեջմենթի և ստեղծագործական որակները բարձրացնելու արդյունքում ունենալ գրավչություն, հույս ունենք կիրառարվեն հանդիսատեսին բերման ենթարկելու վատ պրակտիկայից: Այն կազմակերպությունների, ինչպես նաև թանգարանների ղեկավարները, ովքեր հանրության շրջանակներում չեն կարողանա իրենց մենեջմենթը, ստեղծագործական գործունեությունը և հետաքրքրությունները բարձրացնել, բնականաբար՝ այդ մասով կունենանք փոփոխություններ: Շատ կարևոր է մեր մշակութային կառույցների գործունեության հանրահռչակման հարցը, ինչպես նաև հանդիսատեսին հնարավորություն տանք ինքնուրույն ընտրել Երևանի քաղաքապետարանի ենթակայության ՀՈԱԿ-ները:

Այս մասով պետք է նշեմ, որ մոտ օրերս մենեջմենթի վարպետության դասընթացներ են նախատեսվում Երևանի քաղաքապետարանում և մեր ենթակայության բոլոր ՀՈԱԿ-ների մենեջմենթի պատասխանատուները մեկ շաբաթ շարունակ կլինեն այդ գործընթացի մեջ և՛ մեղիա հարթակում, և՛ հեռուստատեսային, և՛ պաստառների գովազդների միջոցով, նաև նրանք կներգրավվեն այդ աշխատանքներում:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Հովհաննիսյան, խնդրե՛մ:

### **Հայկ Հովհաննիսյան**

-Հարցս վերաբերում է Արամի փողոցի հ. 23 հասցեին: Շենքի փլուզման ժամանակ առաջացած, այսպես ասած, հանրային ճնշումը, քննարկումները, որոնք սլաքներն անընդհատ ուղղում էին դեպի քաղաքապետարան, մյուս կողմից մշակույթի նախարարություն:

Ցանկանում եմ տեղեկանալ ի՞նչ ընթացքում է այդ գործը, քանի որ ինձ, որպես Երևանի քաղաքացի, այլ ոչ թե ավագանու անդամ, շատ է հետաքրքրում մեր պատմամշակութային շենքերի վիճակը:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրե՛մ:

### **Տիգրան Վիրաբյան**

-Արամի փողոցի հ. 23 հասցեի վերաբերյալ պետք է նշեմ, որ ի սկզբանե այս հասցեի շենքի պատի վերականգնման աշխատանքներում Երևանի քաղաքապետարանն իրավական պարտավորություն, որպես այդպիսին, չի ունեցել: Քաղաքապետն իր հարցազրույցների ժամանակ մի քանի անգամ նշել է, որ սա ընդամենը բարի կամքի դրսևորում է, ինչպես նաև բարոյական առումով մենք ցանկանում ենք, որ խնդիրը հնարավորինս արագ լուծում ստանա և այդ լուծումն ընդունելի լինի բոլոր կողմերի համար:

Երկարատև աշխատանքների և համագործակցության արդյունքում այսօր ունենք դրական տեղաշարժ խնդրի լուծման առումով: Օրեր առաջ կնքվեց քառակողմ պայմանագիր, որի արդյունքում ճարտարապետների իտալական ընկերությունը կիրականացնի պատի նախագծանախահաշվային աշխատանքները և ընդհանուր կներկայացնի, թե ինչ սկզբունքով պետք է վերականգնվի այն: Նշեմ, որ նախագծողին ընտրել է պարոն Հեքեքյանը, ով «Հայ փոքրիկ երգիչներ միջազգային ասոցիացիա» ՀԿ-ի նախագահն է և հանդիսանում է շենքի սեփականատերը: Այս պարագայում որևէ անհանգստության խնդիր չկա: Վճարող կողմը հանդիսանում է այն կազմակերպությունը, որն իրականացնում է այդ տարածքի իրացումը: Այդ կազմակերպությունն է պատրաստակամություն հայտնել և՛ նախագծման աշխատանքների համար կատարել վճարում, որը մոտ 14.000 եվրո է կազմում, և՛ նախագծի պատրաստ լինելուց հետո պատի վերականգնման աշխատանքներն ամբողջությամբ ֆինանսավորել:

Կարծում եմ, որ մոտ ժամանակահատվածում և՛ պատի վերականգնման, և՛ շենքի ամբողջական տեսքը պահելու առումով վերջնական փուլի կհասնենք: Բոլոր ուսումնասիրությունները կատարվել են, ճարտարապետների խումբը վերադարձել է Իտալիա և արդեն նախագծման աշխատանքներն են իրականացնում:

**Հայկ Մարության**

-Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի՛ անդամներ, Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 1-ին նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալություն՝ն, ցտեսություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**Կազմեց՝ Անի Եփրիկյան**